ԱՊՐԻ
ԿԻՐԱՌԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ԱՐՄԵՆԻԱ

# Հայաստանի արտաքին քաղաքականությունը ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո

## Դիվերսիֆիկացիան հետմիաբևեռ աշխարհում

Ապրիլ 2025

# Բովանդակություն


Հապավումների ցանկ 3
Զեկույցի մասին 4
Ամփոփագիր 6
Համաշխարհային կարգի կերպափոխում 9
Հարավային Կովկասը որպես ձևավորվող բազմաբևեռ աշխարհի օրինակ 10
2021-2024 թթ՝ տարածաշրջանային աշխարհաքաղաքականության վերելքներն ու անկումները և Հայաստանի արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման սկիզբը 12
Աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական միջանցքներ 16
Հայաստանի արտաքին քաղաքականություն. առանցքային ուղղություններ 19
- Հայ-ադրբեջանական հարաբերություններ. ի՞նչ սպասել ապագայում 19
- Հայ-թուրքական հարաբերություններ. հնարավո՞ր է արդյոք կարգավորումը 20
- Հայ-վրացական հարաբերություններ. ճանաչի՜ր հարևանիդ 21
- Հայ-իրանական հարաբերություններ. բարեկամությունից դեպի գործընկերություն 22
- Հայ-ռուսական հարաբերություններ. վերագործարկման անհրաժեշտություն 24
- Հայաստան-ԵՄ հարաբերություններ. ամրապնդելով առաջընթացը 26
- Հայ-ֆրանսիական հարաբերություններ. նոր գործընկեր պաշտպանության ոլորտում 28
- Հայ-ամերիկյան հարաբերություններ. հարմարվելով Թրամփի երկրորդ վարչակազմին 29
- Հայ-հնդկական հարաբերություններ. գործնականից դեպի քաղաքական 31
- Հայ-չինական հարաբերություններ. պահպանելով տնտեսության և քաղաքականության հավասարակշռությունը 33

Հայաստանի և արաբական աշխարհի հարաբերությունները. դիվերսիֆիկացման կարևոր ուղղություն 34
Ամփոփում 37
Զսպումը հզորացնելու նպատակով դիվերսիֆիկացիայի խորացում. առաջարկներ 38
Գրականության ցանկ 47
ԱՊՐԻ Արմենիայի մասին 57


https://doi.org/10.71308/HTSV7537

# Հապավումների ցանկ

**ԱԱ՝** Ադրբեջանական ավիաուղիներ
**ԳՃՆ՝** «Գոտի և ճանապարհ» նախաձեռնություն
**ԲՐԻԿՄ՝** Բրազիլիա, Ռուսաստան, Իրան, Չինաստան, Հարավային Աֆրիկա, Եգիպտոս, Եթովպիա, Ինդոնեզիա, Իրան և Արաբական Միացյալ Էմիրություններ
**ՀԸԳՀ՝** Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
**ՀԱՊԿ՝** Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն
**ԵՄ՝** Եվրոպական միություն
**ԵԱՏՄ՝** Եվրասիական տնտեսական միություն
**ՀԵՄԱ՝** Հայաստանում Եվրոպական միության առաքելություն
**ՎՈՒԱՄ՝** Վրաստան-Ուկրաինա-Ադրբեջան-Մոլդովա
**ՀՀՄՏՄ՝** Հյուսիս-Հարավ միջազգային տրանսպորտային միջանցք
**ՔՏԿ՝** Քուրդիստանի տարածաշրջանային կառավարություն
**ՆԱՏՕ՝** Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպություն
**ԻՀԿ՝** Իսլամական համագործակցության կազմակերպություն
**ԵԱՀԿ՝** Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
**ԹՊԿ՝** Թյուրքական պետությունների կազմակերպություն
**ԱՄԷ՝** Արաբական Միացյալ Էմիրություններ
**ՄԱԿ ԱԽ՝** Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհուրդ
**ԱՄՆ՝** Ամերիկայի Միացյալ Նահանգներ

## Զեկույցի մասին

Սույն զեկույցում վերլուծվում են 2020թ-ի նոյեմբերից՝ Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմի ավարտից մինչև 2025թ-ի մարտ ընկած ժամանակահատվածում Հայաստանի արտաքին քաղաքականությունում և դրա շուրջ տեղի ունեցած առանցքային իրադարձությունները։ Զեկույցում նշվում է, որ Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմի և ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական դինամիկայի ծավալուն փոփոխությունները ձևավորեցին Հայաստանի կառավարության ձգտումը՝ դիվերսիֆիկացնել արտաքին քաղաքականությունը։ Զեկույցում ուսումնասիրվում են Հայաստանի երկկողմ հարաբերությունները և ներկայացվում են առաջարկներ՝ Հայաստանի արտաքին քաղաքականության ընդհանուր հետագիծը՝ ինչպես լայն շրջանակներում, այնպես էլ կոնկրետ երկկողմ հարաբերությունների մակարդակով ուղղորդելու վերաբերյալ։

Զեկույցի հիմքում թեմայի վերաբերյալ արված լայնածավալ հետազոտությունն է, որը ներառում է նաև հրապարակումներ, պաշտոնական հայտարարություններ և փորձագետների եզրակացություններ։ ԱՊՐԻ Արմենիայի փորձագետները զեկույցի եզրակացությունները հստակեցրել են միջազգային գիտաժողովների և սեմինարների ընթացքում։ Բացի այդ, անցկացվել է ավելի քան 25 հարցազրույց Հայաստանի պաշտոնյաների, ինչպես նաև տարածաշրջանային հարցերով զբաղվող հայ և օտարերկրյա փորձագետների հետ, ներառյալ (ստորև անունները նշված են այբբենական կարգով).

- Թինաթին Ախվլեդիանի (Եվրոպական քաղաքականության հետազոտությունների կենտրոն, Բելգիա)
- Մուսթաֆա Այդին (Միջազգային հարաբերությունների խորհուրդ, Թուրքիա)
- Դեսպինա-Ինո Աֆենտուլի (Միջազգային հարաբերությունների ինստիտուտ, Հունաստան)
- Լորենս Բրոերս (Չաթհամ Հաուս, Մեծ Բրիտանիա)
- Վոյցեխ Գորեցկի (Արևելյան հետազոտությունների կենտրոն, Լեհաստան)
- Աթիլա Դեմկո (Մաթիաս Կորվինուս Կոլեգիում, Հունգարիա)
- Մարի Դեմուլեն (Արտաքին հարաբերությունների եվրոպական խորհուրդ, Ֆրանսիա)
- Ալեքսանդր Իսկանդարյան (Կովկասի ինստիտուտ, Հայաստան)
- Վալի Կալեջի (Իրան – Եվրասիա հետազոտությունների ինստիտուտ, Իրան)
- Ռիչարդ Գիրագոսյան (Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն, Հայաստան)
- Շտեֆան Մայսթեր (Արտաքին հարաբերությունների գերմանական խորհուրդ, Գերմանիա)
- Արմինե Մարգարյան («Կանայք և գլոբալ անվտանգության ճարտարապետություն», Հայաստան)
- Էկա Մետրեվելի (Ռազմավարական և միջազգային հետազոտությունների վրացական հիմնադրամ, Վրաստան)
- Աբհինավ Պանդիյա (Ուսանաս հիմնադրամ, Հնդկաստան)
- Թոմաս դե Վալ (Միջազգային խաղաղության Քարնեգիի հիմնադրամ, Մեծ Բրիտանիա)

- Օլեսյա Վարտանյան (անկախ փորձագետ, Վրաստան)
- Մարսել Ռյոթիգ (Ֆրիդրիխ Էբերտ Շտիֆտունգ, Հարավային Կովկաս, Գերմանիա)
- Էլենորա Տաֆուրո-Ամբրոսետի (Իտալիայի միջազգային քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, Իտալիա)

Շնորհակալություն ենք հայտնում հարցազրույցների բոլոր մասնակիցներին, ԱՊՐԻ Արմենիայի գործընկերներին և արտաքին գրախոսներին, ովքեր աջակցել են սույն հետազոտական նախագծին։

## Ամփոփագիր

**Արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացումը նպաստում է նոր գործընկերների հետ դիվանագիտական, տնտեսական և ռազմական հարաբերությունների զարգացմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով խուսափել վնաս հասցնել գոյություն ունեցող հարաբերություններին: Այս մոտեցումը համարվում է ողջամիտ այն տարածաշրջանների պետությունների համար, որտեղ երկրների շահերը հակասում են միմյանց, օրինակ Հարավային Կովկասում, ինչպես նաև անվտանգության սպառնալիքներին առերեսվող երկրների համար, ինչպիսին Հայաստանն է: Դիվերսիֆիկացիայի անհրաժեշտությունն էլ ավելի է ամրապնդվում համաշխարհային փոխակերպման դարաշրջանում և գոյություն ունեցող կառույցների և նորմերի քայքայման պայմաններում: Մասնավորապես, փոքր պետությունների համար դիվերսիֆիկացիան, ամենայն հավանականությամբ, կնվազեցնի գլոբալ և տարածաշըրջանային տերությունների միջև մրցակցության մեջ ներգրավվելու ռիսկերը:**

Համաշխարհային կարգի փոխակերպումը՝ միաբևեռից դեպի ավելի բարդ, բազմաբևեռ դարաշրջանի անցումը, հավասարապես փոխում է տարածաշրջաններն ու պետությունները, և այս առումով Հարավային Կովկասը և Հայաստանը բացառություն չեն կազմում: Ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկը, Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի ռազմական ճանապարհով գրավումը, ադրբեջանական զորքերի ներխուժումը Հայաստան և այնպիսի հասկացությունների շարունակական առաջմղումը, ինչպիսիք են, այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքը» և «Արևմտյան Ադրբեջանը», խորապես փոխել են Հայաստանի անվտանգության միջավայրը: Ադրբեջանա-թուրքական հարաբերությունների վերաճումը ռազմավարական դաշինքի էլ ավելի է սրել լարվածությունը տարածաշրջանում: Միաժամանակ, Հայաստանի փոխակերպվող հարաբերությունները Ռուսաստանի, Ֆրանսիայի, Եվրոպական միության, Միացյալ Նահանգների և Հնդկաստանի հետ, ինչպես նաև Ռուսաստանի և Ադրբեջանի միջև ստեղծված ռազմավարական գործընկերությունը փոփոխել են Հայաստանի դիրքորոշումը:

2022թ-ից հետո Հայաստանի կառավարությունն ակտիվացրել է արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման ջանքերը՝ Ադրբեջանի բազմակի ներխուժումների և Ռուսաստանի և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության կողմից շոշափելի պատասխանի բացակայության պայմաններում: Հայաստանը ձգտում էր խորացնել դիվանագիտական և ռազմական համագործակցությունը նոր և գոյություն ունեցող գործընկերների՝ մասնավորապես Հնդկաստանի, Ֆրանսիայի, ԵՄ-ի և ԱՄՆ-ի հետ՝ միաժամանակ բացելով բազմաթիվ դեսպանատներ աշխարհով մեկ: **Այս մոտեցումը մենք անվանում ենք «դեպի Արևմուտք դիվերսիֆիկացիա»՝ գլոբալ հարավի տերությունների հետ Հայաստանի աճող փոխգործակցությունը և հատկապես ԵՄ-ի և ԱՄՆ-ի հետ նրա ակտիվ երկխոսությունը նկարագրելու համար:** Հայաստանի այս կողմնորոշումը ելնում է այն հաշվարկից, որ Ուկրաինայում պատերազմի պատճառով Ռուսաստանը էապես կորցրել է և շարունակելու է կորցնել Հարավային Կովկասի վրա ազդելու իր կարողությունը:

Դա նաև թելադրված է այն համոզմունքով, որ Արևմուտքի հետ համագործակցության ընդլայնումն առավել արդյունավետ գործիք է հանդիսանում Ադրբեջանի հետագա ագրեսիան զսպելու համար:

Հայաստանի ներկայիս որդեգրած զսպման ռազմավարության առանցքային տարրն, ըստ վարչապետի, «խաղաղության օրակարգի» իրականացումն է, ինչը ենթադրում է Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորում: Այս համատեքստում Հայաստանի կառավարությունը 2022թ-ի հոկտեմբերին՝ եվրոպական քաղաքական հանրության Պրահայի գագաթնաժողովում, ճանաչել է Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում և ընդունել է 2023թ-ի սեպտեմբերից հետո ստեղծված ստատուս քվոն:

2024թ-ին խաղաղության համաձայնագիրը չստորագրվեց, և արդյունքում հայ-թուրքական կարգավորման հնարավորությունը մնում է հարցականի տակ, քանի որ Թուրքիան շարունակում է այն կապել Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության համաձայնագրի ստորագրման հետ: Միաժամանակ, Ռուսաստանն ամրապնդել է իր ռազմական դիրքերը Ուկրաինայում, և ԱՄՆ-ի վարչակազմն ակտիվ բանակցություններ է սկսել Մոսկվայի հետ հակամարտության խնդրի շուրջ, ինչը Ռուսաստանի պարտությունը դարձնում է ավելի քիչ հավանական և մեծացնում Հարավային Կովկասում Մոսկվայի ազդեցության ուժեղացման հնարավորությունը:

Այս փոփոխությունների պայմաններում Հայաստանի կառավարությունը 2024թ-ի վերջին ամիսներին սկսել է վերադասավորել իր փոխգործակցությունը Ռուսաստանի հետ՝ երկկողմ հարաբերությունների հետագա վատթարացումը մեղմելու նպատակով: Ռազմավարական անորոշության համատեքստում, ինչպես նաև հաշվի առնելով զսպման քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը, Հայաստանը պետք է վարի արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման բազմակողմանի ռազմավարություն, ինչը կհավասարակշռի իր արևմտամետ կողմնորոշումը՝ ոչ արևմտյան պետությունների հետ հարաբերությունները խորացնելու ավելի ակտիվ ջանքերի իրականացմամբ: Նման մոտեցումը կարող է թույլ տալ Հայաստանին պաշտպանել իր ինքնիշխանությունը, նավարկել միջազգային հարաբերությունների փոփոխվող ուժային բալանսի պայմաններում և օգտագործել ստեղծվող հնարավորությունները՝ միաժամանակ նվազեցնելով տարածաշրջանային և գլոբալ տերություններին հակադրվելու ռիսկը:

## Զսպումը հզորացնելու նպատակով դիվերսիֆիկացիայի խորացում. առաջարկներ

- **Ամրապնդել զսպումը երկու տարբեր միջոցներով.** Հայաստանի զսպման քաղաքականությունը խթանել երկու եղանակով՝ իրականացնել ռազմական արդիականացում, ամրաշինված սահմանների ստեղծում և առանցքային գործընկերների հետ դիվանագիտական կապերի խորացում: Նման մոտեցումը կբարձրացնի ադրբեջանական ցանկացած հնարավոր ագրեսիայի ռազմական, քաղաքական և տնտեսական գինը Բաքվի համար: Հատկապես արդյունավետ կլինի Հարավային Կովկասում խաղաղության պահպանմամբ և բարգավաճմամբ շահագրգռված կամ դրանց ակտիվորեն աջակցող ուժային կենտրոնների՝ մասնավորապես Ռուսաստանի, Իրանի, ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ փոխգործակցության ընդլայնումը:
- **Ներգրավել Թուրքիային.** շարունակել Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ ջանքերը՝ ձգտելով այս գործընթացը տարանջատել Հայաստանի և Ադրբեջանի միջև բանակցություններից՝ թուլացնելու Անկարայի և Բաքվի դաշինքը: Այլ դերակատարների, ինչպիսիք են, օրինակ, ԱՄՆ-ը և ԵՄ-ն, աջակցությունը՝ համոզել Թուրքիային հրաժարվել իր նախապայմաններից, ևս կարևոր ներդրում կլինի:
- **Ամրապնդել տնտեսական կապերը Հայաստանի հետ բաց սահմաններ ունեցող պետությունների հետ.** հայկական բիզնեսի ակտիվ մասնակցությամբ ընդլայնել տնտեսական, էներգետիկ և ենթակառուցվածքային համագործակցությունն Իրանի հետ և ամրապնդել տնտեսական հարաբերությունները Վրաստանի հետ:
- **Ռուսաստանի հետ հարաբերությունների վերագործարկում.** երկկողմ հարաբերությունների բնույթի փոփոխման պայմաններում Հայաստանը պետք է հստակ ձևակերպի Մոսկվայի հետ նոր հարաբերությունների իր տեսլականը: Միաժամանակ, այն պետք է բաց հաղորդակցվի իր նախկին գլխավոր գործընկերոջ հետ՝ ռազմավարական թափանցիկություն ապահովելու և թյուրընկալման ռիսկը նվազեցնելու համար:
- **Ամրապնդել գործընկերային հարաբերությունները ԵՄ-ի և ԱՄՆ-ի հետ.** հենվել ԵՄ-Հայաստան գործընկերության նոր օրակարգի և ԱՄՆ-Հայաստան ռազմավարական գործընկերության կանոնադրության ստեղծած դինամիկայի վրա: Վերաձևակերպել Հայաստանի միջազգային դիրքավորումը՝ ընդգծելու տարածաշրջանում կայունացնող և միավորող ուժ դառնալու նրա ձգտումները:
- **Ամրապնդել գործընկերությունը գլոբալ հարավի հետ, հատկապես տնտեսական ոլորտում.** օգտագործել առևտրի ընդլայնման ուղղությամբ զարգացող տերությունների դիվանագիտական ռազմավարության տնտեսական հնարավորությունները, ներգրավել ներդրումներ նոր տեխնոլոգիաների և վերականգնվող էներգիայի ոլորտներում, ինչպես նաև զարգացնել համագործակցության բազմակողմ ձևաչափեր՝ Հայաստանի տնտեսական և աշխարհաքաղաքական հնարավորություններն ընդլայնելու համար:

## Համաշխարհային կարգի կերպափոխում

Խորհրդային Միության փլուզումը և սառը պատերազմի ավարտը սկիզբ դրեցին միաբևեռ աշխարհին, որը որոշ փորձագետներ անվանում էին «միաբևեռության պահ»[1]: Այն բնորոշվում էր որպես ԱՄՆ-ի առաջնորդության և ազատական ժողովրդավարության ու շուկայական տնտեսության տարածման վերաբերյալ լավատեսության շրջան[2]: 20-րդ դարի վերջի «ժողովրդավարացման երրորդ ալիքը»[3], ինչպես նաև ԵՄ-ի[4] և ՆԱՏՕ-ի ընդլայնումը[5] 21-րդ դարի սկզբին, կարծես, հաստատել էին այդ միտումները միջազգային հարաբերությունների ոլորտում:

21-րդ դարի առաջին տասնամյակի կեսերից գիտնականներն ու քաղաքական գործիչները սկսել էին բանավիճել միաբևեռության ավարտի և համաշխարհային կարգի՝ դեպի ավելի բարդ դարաշրջանի անցման շուրջ[6]: Չինաստանի աճող տնտեսական հզորությունը և Ռուսաստանի կողմից ԱՄՆ-ի գլխավորած միջազգային կարգի քննադատությունը՝ հատկապես 2007թ-ին Մյունխենի անվտանգության համաժողովում նախագահ Վլադիմիր Պուտինի ելույթը, ազդանշեցին միջազգային հարաբերություններում սպասվող փոփոխությունները[7]: Աշխարհաքաղաքական ցնցումները, այդ թվում՝ Արաբական գարունը, 2014թ-ի ուկրաինական ճգնաժամը, Թայվանի շուրջ լարվածությունը, կլիմայի փոփոխությունը, ինչպես նաև տնտեսական և տեխնոլոգիական անհավասարության ընդլայնումը խորացրել են միջազգային դերակատարների միջև տարաձայնությունները:

2017թ-ին Թրամփի վարչակազմը ներկայացրեց «մեծ տերությունների մրցակցության» հայեցակարգը՝ ներկայացնելով ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը: Այս հայեցակարգը պաշտոնապես ներառվել է 2017թ-ի դեկտեմբերին ընդունված ԱՄՆ-ի Ազգային անվտանգության ռազմավարության[8] և Ազգային պաշտպանության ռազմավարության մեջ[9], որոնցում Ռուսաստանը և Չինաստանը սահմանվել են որպես ռևիզիոնիստական տերություններ և ԱՄՆ-ի ռազմավարական մրցակիցներ:

ԱՄՆ-ի և Չինաստանի միջև առևտրային պատերազմի մեկնարկն այս մրցակցության շրջանակներում ներառեց նաև տնտեսական ոլորտը[10], մինչդեռ Ուկրաինայում 2022թ-ին սկսված պատերազմը հանգեցրեց 1950-60-ականների սառը պատերազմի ամենաթեժ պահից հետո Ռուսաստան-Արևմուտք հարաբերությունների չտեսնված վատթարացման:

Բայդենի վարչակազմը նկարագրեց 21-րդ դարի աշխարհաքաղաքականությունը որպես ժողովրդավարությունների և ավտորիտար ռեժիմների միջև պայքար: Այս տեսլականը ձևակերպվել է 2021թ-ի մարտ ամսվա Ազգային անվտանգության ժամանակավոր ռազմավարական ուղեցույցում[11] և 2022թ-ի ազգային Անվտանգության ռազմավարությունում[12]: Որոշ վերլուծաբաններ պնդում են, որ Ռուսաստանի և Չինաստանի գլխավորած ոչ արևմտյան պետությունների կոալիցիան ձգտում է խաթարել ԱՄՆ-ի գլխավորած միջազգային կարգը[13]: Ավելի լայն ռազմավարությունը ներառում է միջազգային առևտրի և պետական խնայողությունների ոլորտներում ԱՄՆ-ի դոլարից կախվածության նվազեցում[14]:

Ռուսաստանը, Չինաստանը և այլ պետություններ գնալով ավելի ակտիվ կոչ են անում բազմաբևեռ աշխարհ ստեղծելու, ինչպես նաև Արևմուտքից և Արևմուտքի ղեկավարած բազմակողմ կառույցներից հեռու մնալու վերաբերյալ[15]։ Վերջին տասնամյակում Չինաստանը առաջ է քաշել մի քանի նախաձեռնություն, ինչպիսիք են գլոբալ զարգացման նախաձեռնությունը, գլոբալ անվտանգության նախաձեռնությունը և քաղաքակրթությունների գլոբալ նախաձեռնությունը՝ այլընտրանքային գլոբալ կառույց ձևավորելու միտումով։ ԲՐԻՔՍ-ի նման կազմակերպությունների ընդլայնումը վկայում է աճող բաժանման մասին[16]։

Միաբևեռ աշխարհին անցյալում է։ Նրա փոխարեն առաջանում է նոր միջազգային կարգ, որին բնորոշ են ուժի դիֆուզիան, չփոխկապակցված և հաճախ չհամաձայնեցված գլոբալ շարժումները, խորացող մրցակցությունը և աճող աշխարհաքաղաքական բախումները։ Դոնալդ Թրամփի հաղթանակը 2024թ-ի նոյեմբերին ԱՄՆ-ի նախագահական ընտրություններում և «Ամերիկան առաջին տեղում» քաղաքականությունը, ամենայն հավանականությամբ, կարագացնեն այս վերափոխումը։

## Հարավային Կովկասը որպես ձևավորվող բազմաբևեռ աշխարհի օրինակ

Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի միջև գտնվող Հարավային Կովկասի տարածաշրջանը հանդիսանում է կարևորագույն տարանցիկ ուղիների հանգույց՝ Եվրոպայից դեպի Կենտրոնական Ասիա և Չինաստան, իսկ Ռուսաստանից դեպի Մերձավոր Արևելք և Հարավարևելյան Ասիա։ Այն երկար տարիներ հանդիսանում է մրցակցության հարթակ՝ սկսած անտիկ դարաշրջանից, երբ տարբեր կայսրություններ մրցել են դրա վրա ազդելու և վերահսկելու համար։ Խորհրդային Միության փլուզումից հետո տարածաշրջանը բացվել է ավելի լայն միջազգային գործակցության համար՝ ներգրավելով Թուրքիայի, Իրանի, ԱՄՆ-ի, ապա նաև ԵՄ-ի (Արևելյան գործընկերության նախաձեռնության միջոցով), ինչպես նաև Իսրայելի, իսկ վերջերս՝ Չինաստանի աշխարհաքաղաքական շահերը։

2020թ-ին Լեռնային Ղարաբաղի պատերազմից առաջ տարածաշրջանում գերիշխում էին երկու հիմնական տերություններ՝ Ռուսաստանը (Հայաստանի ռազմավարական դաշնակիցը, որն ունի Հայաստանում տեղակայված ռազմաբազա և սահմանապահներ), և Թուրքիան, որն ունի ռազմավարական գործընկերային հարաբերություններ Ադրբեջանի և Վրաստանի հետ[17]։ ԱՄՆ-ն աջակցել է այս եռակողմ համագործակցությանը՝ այն դիտարկելով որպես ռուսական ազդեցությունը զսպելու մեխանիզմ[18]։ Դրան զուգահեռ 1997թ-ին ստեղծվել է ՎՈՒԱՄ կազմակերպությունը (Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան և Մոլդովա), որը 2006թ-ին վերանվանվել է «Ժողովրդավարության և տնտեսական զարգացման կազմակերպություն-ՎՈՒԱՄ»-ի։ Այն առաջացել է որպես տարածաշրջանային կազմակերպություն, որը կոչված է զարգացնել համագործակցությունը և հակազդել Մոսկվային[19]։

2020թ-ին Լեռնային Ղարաբաղի պատերազմը[20], 2022թ-ին ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկը և Ադրբեջանի կողմից 2023թ-ին Լեռնային Ղարաբաղի ռազմական գրավումը խախտել են տարածաշրջանում ստատուս քվոն։ Ռուսաստանի զբաղվածությունը Ուկրաինայով նվազեցրել է Հարավային Կովկասում զարգացումների վրա ազդելու նրա կարողությունը։ Թուրքիան զգալի

աջակցություն է տրամադրել Ադրբեջանին՝ Լեռնային Ղարաբաղում 2020թ-ի պատերազմից առաջ և դրա ընթացքում՝ հասնելով Բաքվի նկատմամբ իր ազդեցության աճին[21]։

Երբ Ռուսաստանն ու ՀԱՊԿ-ը չկարողացան համարժեք արձագանքել 2022թ-ի սեպտեմբերին Ադրբեջանի՝ Հայաստան ներխուժմանը[22], Երևանը սկսեց դիվերսիֆիկացնել իր արտաքին քաղաքականությունը՝ ներտարածաշրջանային բալանսի մեջ ներգրավելով պատմականորեն պակաս ներգրավված տերությունների, օրինակ Հնդկաստանին։

ԱՄՆ-ը և ԵՄ-ն նույնպես ընդլայնել են իրենց տարածաշրջանային ներգրավվածությունը՝ աջակցելով Բրյուսելի և Վաշինգտոնի նախաձեռնությամբ հայ-ադրբեջանական բանակցությունների անցկացմանը։ 2023թ-ի դեկտեմբերին[23] ԵՄ-ն Վրաստանին շնորհել է անդամակցության թեկնածուի կարգավիճակ, սակայն 2024թ-ի հունիսին դադարեցրել է այդ գործընթացը՝ Վրաստանի կողմից «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» ընդունված օրենքին ի պատասխան[24]։ Ադրբեջանն ընդլայնել է իր կապերը Իսրայելի հետ ռազմավարական գործընկերության զգայուն ոլորտներում, ներառյալ էներգետիկան, սպառազինության և ռազմական տեխնիկայի գնումները և կիբերանվտանգությունը։ Բացի այդ, Ադրբեջանը, Թուրքիան և Պակիստանը հաստատել են ռազմավարական գործընկերություն[25], որն էլ ավելի է ամրապնդել եռակողմ ռազմական կապերը[26]։

Չինաստանը նույնպես ընդլայնել է իր տարածաշրջանային ներկայությունը[27]՝ 2023թ-ին Վրաստանի[28] և 2024թ-ին Ադրբեջանի[29] հետ ստորագրելով ռազմավարական գործընկերության համաձայնագրեր։ Պեկինը միաժամանակ ընդլայնել է իր «փափուկ ուժը»՝ 2024թ-ի սեպտեմբերին գործարկելով ուղիղ չվերթներ Չինաստանի և Հայաստանի միջև՝ դրանով ամրապնդելով երկու ժողովուրդների միջև կապերը[30]։

Հաշվի առնելով ԱՄՆ-ի, Ռուսաստանի, ԵՄ-ի և դրա անդամ պետությունների, Թուրքիայի, Իրանի, Իսրայելի, Չինաստանի և Հնդկաստանի տարբերվող և համընկնող շահերը, Հարավային Կովկասը հանդիսանում է ձևավորվող բազմաբևեռ աշխարհակարգի օրինակ, ինչը հավելյալ բարդություն և անորոշություն է ստեղծում թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի և թե՛ Վրաստանի համար։

# 2021-2024 թթ՝ տարածաշրջանային աշխարհաքաղաքականության վերելքներն ու անկումները և Հայաստանի արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման սկիզբը

2020 թվականը դժվարին տարի էր ամբողջ աշխարհի համար, բայց Հայաստանին բաժին հասած սուր մարտահրավերներին քիչ երկրներ բախվեցին: COVID-19 համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքներին առերեսող Հայաստանը բախվեց լայնածավալ ռազմական հարձակման, որն Ադրբեջանը սանձահարել էր Լեռնային Ղարաբաղի դեմ 2020թ-ի սեպտեմբերի 27-ին[31]: 44-օրյա պատերազմն ավարտվեց հայերի պարտությամբ և 2020թ-ի նոյեմբերի 10-ի եռակողմ հայտարարության ստորագրմամբ[32]:

Ռուսաստանի միջնորդությամբ կնքված այս հայտարարության դրույթների համաձայն՝ հայկական զորքերը պետք է դուրս բերվեին նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հարակից տարածքներից, նախնական հնգամյա ժամկետով պետք է տեղակայվեին ռուս խաղաղապահներ և պետք է ստեղծվեր Հայաստանը Լեռնային Ղարաբաղին կապող Լաչինի միջանցք[33]:

Պատերազմից հետո Հայաստանը թևակոխել էր ներքաղաքական ինտենսիվ ցնցումների շրջան, որոնք ավարտվեցին 2021թ-ի հունիսին տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրություններով: Քվեարկության արդյունքում վարչապետ վերընտրվեց Նիկոլ Փաշինյանը[34]: 2021թ-ի հունվարից մինչև 2025թ-ի հունվար իրադարձությունների մանրամասն ժամանակացույցը կարելի է գտնել հավելվածում:

## 2021թ՝ սահմանափակ փոփոխություններ Հայաստանի ավանդական արտաքին քաղաքականությունում

2021թ-ին Ադրբեջանը ռազմական ճնշման արշավ էր սկսել Հայաստանի դեմ՝ մայիսին[35] և նոյեմբերին[36] իրականացնելով ներխուժումներ Հայաստան և գրավելով տարածքներ: Այս բարդ և փոփոխվող միջավայրում Հայաստանը շարունակում էր «դեպի Ռուսաստան կողմնորոշված» արտաքին քաղաքականություն վարել: 2021թ-ի հունվարին[37] և նոյեմբերին[38] վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ մասնակցել է հայ-ադրբեջանական հարաբերությունների թեմայով Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի կազմակերպած երկու գագաթնաժողովներին: 2021թ-ի հունվարի 11-ին ստեղծվել է Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի փոխվարչապետերի գլխավորած եռակողմ աշխատանքային խումբ՝ տարածաշրջանային հաղորդակցման ուղիների վերականգնման նպատակով: 2021թ-ի օգոստոսին Հայաստանը Ռուսաստանի հետ նոր պայմանագիր է կնքել՝ ռուսաստանյան արտադրության սպառազինության նոր խմբաքանակ գնելու վերաբերյալ[39]: Դրան զուգահեռ, 2021թ-ի դեկտեմբերին ԵՄ-ն սկսել է իր միջնորդական ջանքերը՝ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի աջակցությամբ Բրյուսելում կազմակերպելով Նիկոլ Փաշինյանի և Իլհամ Ալիևի հանդիպումը[40]:

## 2022թ՝ շրջադարձային տարի տարածաշրջանի և Հայաստանի համար

Տարածաշրջանային ուժերի հավասարակշռությունը նորից սկսեց փոխվել 2022թ-ի փետրվարին ռուս-ուկրաինական պատերազմի սկսվելուց հետո: Ուկրաինայի նկատմամբ արագ հաղթանակի հասնելու Ռուսաստանի անկարողությունը և ապրիլին ռուսական զորքերի դուրսբերումը Կիևի արվարձաններից պարզ դարձրեց, որ հակամարտությունը կվերաճի ծախսատար և հյուծող պատերազմի: Իրադարձությունների նման զարգացումը Ռուսաստանից պահանջում էր զգալի ռազմական, մարդկային և վարչական ռեսուրսներ ուղղել դեպի Ուկրաինա, ինչը նվազեցնում էր այլ տարածաշրջաններում՝ ներառյալ Հարավային Կովկասը, ներգրավվածություն և ներկայություն պահպանելու Մոսկվայի կարողությունը:

Ադրբեջանն արագորեն օգտվեց տարածաշրջանային փոփոխվող դինամիկայից՝ մարտ ամսին ներխուժելով Լեռնային Ղարաբաղի Փառուխ գյուղ, որի անվտանգության համար պատասխանատու էին ռուս խաղաղապահները[41]: Դրան հաջորդեցին նոր հարձակումներ օգոստոսին, որոնք ստիպեցին Լեռնային Ղարաբաղի իշխանություններին տարհանել Լաչինի միջանցքին հարող մի քանի հայկական բնակավայրերի բնակիչներին և համաձայնել օգտագործել Հայաստանը Լեռնային Ղարաբաղի հետ կապող նոր ճանապարհը[42]: Այս պայմաններում Ռուսաստանն առաջարկել էր հետաձգել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշումը[43]: 2022թ-ի օգոստոսին Հայաստանը համաձայնություն էր տվել ռուսաստանյան առաջարկի նախագծին[44], սակայն այն մերժվել էր Ադրբեջանի կողմից[45]: Դրան զուգահեռ ԵՄ-ն ակտիվացրեց իր աջակցության ջանքերը՝ երեք հանդիպում կազմակերպելով ապրիլին[46], մայիսին[47] և օգոստոսին[48]:

Սեպտեմբերին Ադրբեջանը հարձակում սկսեց Հայաստանի դեմ[49], ինչը հանգեցրեց հայկական լրացուցիչ տարածքների գրավմանը և բազմաթիվ մարդկային զոհերի: Այն պայմաններում, երբ ԵՄ-ն, Ֆրանսիան և ԱՄՆ-ն դատապարտեցին այս ներխուժումը, Ռուսաստանը լռություն պահպանեց: Դեկտեմբերին Ադրբեջանը ցամաքային շրջափակման ենթարկեց Լեռնային Ղարաբաղը՝ 10 ամսով կտրելով տեղի հայերին ամենօրյա կյանքի համար անհրաժեշտ մատակարարումներից[50]: Մարդու իրավունքների ոտնահարման այս ողբերգությունը հարված էր նաև Ռուսաստանի իմիջին՝ ակնհայտ դարձնելով Լաչինի միջանցքը բաց պահելու նրա անկարողությունը[51] և մատնանշելով տարածաշրջանային կարգի հնարավոր փոփոխությունները հօգուտ Թուրքիայի:

Ադրբեջանի սեպտեմբերյան ագրեսիայից հետո Հայաստանը հայտնվեց վտանգավոր վիճակում: Ակնհայտ դարձավ, որ ո՛չ Ռուսաստանը, ո՛չ ՀԱՊԿ-ը չեն կարող կատարել 1997թ-ի հայ-ռուսական երկկողմ պայմանագրով ստանձնած պարտավորությունները կամ ՀԱՊԿ շրջանակներում հավաքական անվտանգության երաշխիքների ապահովումը: 2020թ-ի Լեռնային Ղարաբաղի պատերազմում պարտությունից հետո Հայաստանի և Ադրբեջանի միջև ռազմական հավասարակշռությունը վճռականորեն փոխվել էր հօգուտ Բաքվի: Ավելին, Ռուսաստանը չկարողացավ Հայաստանին տրամադրել 2021թ-ի օգոստոսի համաձայնագրով նախատեսված սպառազինությունը[52]: Ի պատասխան այս մարտահրավերներին՝ Հայաստանի կառավարությունը հոկտեմբերին կայացած Եվրոպական քաղաքական համայնքի առաջին գագաթնաժողովի շրջանակներում ստորագրեց Պրահայի հռչակագիրը:

### Պրահայի հռչակագիր

2022թ-ի հոկտեմբերին Պրահայում կայացած Եվրոպական քաղաքական համայնքի առաջին գագաթնաժողովի ժամանակ Հայաստանն ու Ադրբեջանը վերահաստատեցին իրենց հավատարմությունը Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը և Ալմա-Աթայի 1991թ-ի Հռչակագրին՝ համաձայն որի նրանք ճանաչել են միմյանց տարածքային ամբողջականությունը և ինքնիշխանությունը խորհրդային վարչական սահմաններում: Այսպիսով, ստորագրելով Պրահայի հռչակագիրը, Հայաստանը Լեռնային Ղարաբաղը ճանաչեց որպես Ադրբեջանի մաս՝ հեռանալով Երևանի ավանդական դիրքորոշումից, համաձայն որի այս անկլավի իրավական կարգավիճակը թողնվում էր չլուծված մինչև հակամարտության վերջնական կարգավորումը:

Հայաստանի կառավարությունը կարծում էր, որ այդ քայլը հնարավորություն կտա կանխել Ադրբեջանի կողմից հետագա հարձակումները և, միևնույն ժամանակ, հենվելով ռուս խաղաղապահների ներկայության վրա, ապահովել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության անվտանգությունը: Հայաստանի կառավարությունը նաև հույս ուներ, որ ԱՄՆ-ն և ԵՄ-ն ճնշում կգործադրեն Ադրբեջանի նկատմամբ, որպեսզի այն համաձայնվի հայերի անվտանգ երկարաժամկետ ներկայությունն ապահովող միջազգային մեխանիզմների:

Հայաստանի արտաքին քաղաքականության փաստացի դիվերսիֆիկացիան սկսվել է 2022թ-ի սեպտեմբերին: Դրա մասին է վկայում նաև հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով ՀԱՊԿ-ի առաքելություն տեղակայելու առաջարկի մերժումը[53]: Փոխարենը Երևանը դիմեց ԵՄ-ին դիտորդներ ուղարկելու խնդրանքով՝ հավանաբար, ոգեշնչված Վրաստանում ԵՄ դիտորդական առաքելությունից: ԵՄ-ի դիտորդները ժամանել են Հայաստան 2022թ-ի հոկտեմբերին՝ նախնական երկամսյա առաքելությամբ, որը 2023թ-ի փետրվարին երկարաձգվել է երկու տարի ժամկետով[54]:

## 2023-2024թթ՝ դեպի Արևմուտք Հայաստանի դիվերսիֆիկացիան

Հայաստանի արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացիան կտրուկ աճել է 2023 և 2024թթ-ին՝ շեշտը դնելով հատկապես ԵՄ-ի և ԱՄՆ-ի հետ հարաբերությունների ամրապնդման վրա: 2023թ-ին Հայաստանը մասնակցել է ԵՄ աջակցությամբ անցկացված երեք եռակողմ հանդիպումներին[55]: Հայաստանը նաև ընդունել է ԱՄՆ-ի առաջարկը՝ բանակցություններ սկսել 2022թ-ի սեպտեմբերին Ադրբեջանի՝ Հայաստան կատարած ներխուժումից անմիջապես հետո: Այս ամենը տեղի է ունեցել Ռուսաստանի միջնորդական ջանքերի նվազմանը զուգահեռ, մինչ Հայաստանը հրաժարվում էր դրանց մասնակցել: Հայաստանը ակտիվ մասնակցել է ԵՄ-Հայաստան նոր գործընկերության օրակարգի բարձր մակարդակի փաստաթղթի շուրջ բանակցություններին, հասել է Խաղաղության եվրոպական հիմնադրամի շրջանակներում «ոչ մահացու ձևաչափով» աջակցություն տրամադրելու հայտի բավարարմանը[56], սկսել է մուտքի արտոնագրերի

ազատականացման շուրջ երկխոսությունը[57] և, վերջապես, 2024թ-ի ամռանը ԱՄՆ-Հայաստան ռազմավարական գործընկերության վերաբերյալ բանակցությունների մեկնարկին[58]։

Մինչ արևմտյան գործընկերները հայկական դիվանագիտության հիմնական ուշադրության կենտրոնում էին, Երևանն ակտիվորեն համագործակցել է նաև այլ երկրների հետ։ 2024թ-ի հունվարին Հայաստանը Վրաստանի հետ ստորագրել է ռազմավարական գործընկերության հռչակագիր[59], դիվանագիտական հարաբերություններ է հաստատել Սաուդյան Արաբիայի հետ[60] և 2024թ-ի ընթացքում բացել մի քանի դեսպանատուն՝ երկկողմ հարաբերություններն ակտիվացնելու նպատակով։ Վարչապետ Նիկոլ Փաշինյանն առաջին անգամ մասնակցել է 2024թ-ի հոկտեմբերին Ռուսաստանում տեղի ունեցած ԲՐԻՔՍ-ի գագաթնաժողովին[61]։ 2023 և 2024թթ-ին Հայաստանը շարունակել է ընդլայնել իր պաշտպանական համագործակցությունը Հնդկաստանի հետ և պայմանագրեր է կնքել Ֆրանսիայից սպառազինություն գնելու վերաբերյալ[62]։ Շարունակվել են նաև ԱՄՆ-ի հետ խաղաղապահության ոլորտում զորավարժությունները[63]։

Տարիների ընթացքում Հարավային Կովկասի աշխարհաքաղաքականությունն ավելի ու ավելի է ձեռք բերել աշխարհատնտեսական բնույթ, երբ մրցակցությունը ընթանում է միջազգային առևտրին կամ ենթակառուցվածքային նախագծերին մասնակցելու կամ դրանցից այլոց բացառումն ապահովելու շուրջ։ Աշխարհաքաղաքականության և աշխարհատնտեսականության փոխհյուսվածությունը միայն ակտիվացել են շնորհիվ շարունակական գլոբալ փոփոխությունների։ Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթությունների ապագա դինամիկան հստակեցնելու համար անհրաժեշտ է մրցակցող և համընկնող աշխարհատնտեսական նախագծերի ավելի մանրամասն ուսումնասիրություն։

## Աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական միջանցքներ

Տարանցիկ միջանցքները հանդիսանում են պոտենցիալ խնդիր, որը կրկին ի հայտ է եկել Ուկրաինայի պատերազմի արդյունքում: Դրանք Հարավային Կովկասում կռվախնձոր են դարձել, և դրա ելքը կարող է որոշել տարածաշրջանի ապագա աշխարհաքաղաքական կառուցվածքը:

### Հարավային Կովկասը՝ առևտրային ուղիների և հայեցակարգերի խաչմերուկ

| | Նկարագրություն | Ներգրավված երկրներ | Հիմնական նկատառումներ | Խոչընդոտներ (մինչև դրանց ավարտը) |
|---|---|---|---|---|
| **Միջին Միջանցք** | Չինաստանը ԵՄ-ի հետ կապող, Ռուսաստանը և Իրանը շրջանցող այլընտրանքային ուղի | Ղազախստան, Ադրբեջան, Վրաստան և Թուրքիա | Համաշխարհային բանկի համաձայն՝ կխթանի մասնակից երկրների միջև տարածաշրջանային առևտուրը | Տարածաշրջանում անկայունություն<br><br>Ենթակառուցվածքների և ներդրողների հետաքրքրության պակաս |
| **Ադրբեջանի «Զանգեզուրի միջանցք»** | Հայաստանի տարածքով Ադրբեջանը Թուրքիային կապող ցամաքային երթուղի՝ Ադրբեջանի քաղաքացիների և ապրանքների նկատմամբ հայկական վերահսկողության բացակայությամբ | Ադրբեջան, Թուրքիա | Ավելի շատ աշխարհաքաղաքական ճնշում, քան տնտեսական արդյունավետություն՝ Արազի միջանցքի առկայության պայմաններում | Խախտում է տարածքային ամբողջականության միջազգային սկզբունքը և միջազգային առևտրի ընդունված նորմերը |
| **Հյուսիս-Հարավ միջազգային տրանսպորտային միջանցք** | Կապում է Հնդկաստանը Ռուսաստանի և Եվրոպայի հետ՝ Իրանի, Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի միջոցով | Հնդկաստան, Ռուսաստան և Իրան | Իրանի և Ռուսաստանի դեմ պատժամիջոցները, ինչպես նաև Ուկրաինայում պատերազմը հետագիծը փոխել են ավելի դեպի Հարավ-Հյուսիս առևտրային կոնֆիգուրացիա | Պատժամիջոցներ, անկայունություն |
| **Հայաստանի «Խաղաղության խաչմերուկ»** | Տարածաշրջանային փոխկապակցվածության վերաբերյալ Հայաստանի տեսլականը | Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Իրան, Թուրքիա | Բոլոր տարածաշրջանային հաղորդակցման ուղիների վերաբացում, ինչը կկապի Ադրբեջանին Թուրքիայի հետ, և Իրանին՝ Վրաստանի, Սև Ծովի և Ռուսաստանի հետ Հայաստանի տարածքով | «Զանգեզուրի միջանցք» ստեղծելու Ադրբեջանի պահանջը<br><br>Արդյունավետությունը հիմնավորող ուսումնասիրության բացակայություն |

## Միջին միջանցք

Չինաստանը, Ղազախստանը, Ադրբեջանը, Վրաստանն ու Թուրքիան «Միջին միջանցքը» առաջ են մղում որպես այլընտրանքային երթուղի, որը կմիացնի Չինաստանը Եվրոպային՝ շրջանցելով Ռուսաստանն ու Իրանը։ Այդ միջանցքի մասին խոսակցությունները սկսել են Բաքու–Թբիլիսի–Կարս երկաթուղու շինարարության հետ միաժամանակ և ավելի մեծ ուշադրության արժանացել 2022թ-ի փետրվարից հետո, երբ Ռուսաստանի ներխուժումը Ուկրաինա և արևմտյան հետագա պատժամիջոցները կասկածի տակ են դրել Չինաստան-Ռուսաստան-Եվրոպա ցամաքային երթուղու կենսունակությունը։

2023թ-ի նոյեմբերին Համաշխարհային բանկը հրապարակել է «Միջին միջանցքի» մասին հատուկ զեկույց, որը ներառում է առաջարկներ մինչև 2030թ փոխադրումների ծավալը եռապատկելու և ճանապարհաժամանակը կիսով չափ կրճատելու վերաբերյալ[64]։ «Միջին միջանցքի» հիմնական առավելությունը լինելու է մասնակից երկրների միջև տարածաշրջանային առևտրի խթանումը, այլ ոչ թե դրա օգտագործումը լոկ որպես Չինաստանի և Եվրոպայի միջև առևտրային ուղի։ ԱՄՆ-ն կողմ է երթուղու մեկ այլ տարբերակի, որը կկապի Կենտրոնական Ասիայի երկրները Եվրոպային՝ շրջանցելով Ռուսաստանը և Չինաստանը և նրանց դուրս թողնելով նախագծից՝ դրանով իսկ նվազեցնելով նրանց տարածաշրջանային ազդեցությունը[65]։

## Ադրբեջանի «Զանգեզուրի միջանցք»

2020թ-ի Լեռնային Ղարաբաղում պատերազմից հետո Ադրբեջանը սկսեց պնդել այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի»՝ Ադրբեջանը Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը և Թուրքիային կապող ցամաքային երթուղու մասին, որը կարող է անցնել Հայաստանի Վայոց ձորի կամ Սյունիքի մարզերով։ Բաքուն պնդում է, որ չպետք է լինի որևէ վերահսկողություն Ադրբեջանից Նախիջևան և հակառակ ուղղությամբ անցնող Ադրբեջանի քաղաքացիների և ապրանքների նկատմամբ[66]։ «Զանգեզուրի միջանցքը» ներկայացվում է որպես «Միջին միջանցքի» կենսական հատված՝ ձգտելով ստանալ այս նախագծին մասնակցող երկրների աջակցությունը[67]։ «Զանգեզուրի միջանցքը», սակայն, ավելի շատ աշխարհաքաղաքական նախաձեռնություն է, քան տնտեսական, քանի որ Ադրբեջանը Նախիջևանին կապված է Իրանի տարածքով և երկու երկրները պայմանավորվել են ստեղծել «Արազի միջանցքը»՝ այդ հասանելիությունը հեշտացնելու նպատակով[68]։ Ադրբեջանն ու Թուրքիան մտադիր են տարածաշրջանային տնտեսական համագործակցության քողի ներքո «Զանգեզուրի միջանցքն» օգտագործել Հարավային Կովկասում իրենց ազդեցությունն ուժեղացնելու համար։ Վերջին տարիներին նախագահ Ալիևը ընդգծել է թյուրքական աշխարհի միավորման անհրաժեշտությունը՝ Թուրքիայից մինչև Ղազախստան, հայտարարելով, որ Ադրբեջանից Արևմտյան Զանգեզուրն անջատելու և այն Հայաստանին հանձնելու խորհրդային կառավարության որոշումը հանգեցրեց թյուրքական աշխարհի աշխարհագրական բաժանմանը[69]։

## Հյուսիս-Հարավ միջազգային տրանսպորտային միջանցք

2000թ-ին Հնդկաստանը, Ռուսաստանը և Իրանը հուշագիր ստորագրեցին ՀՀՄՏՄ ստեղծման մասին, որը պետք է միացներ Հնդկաստանը Եվրոպային՝ Իրանի, Հարավային Կովկասի և Ռուսաստանի միջոցով։ Այնուամենայնիվ, Իրանի նկատմամբ միջազգային պատժամիջոցները խոչընդոտել են նախագծի զարգացմանը: 2022թ-ի փետրվարից հետո Ռուսաստանը և Հնդկաստանը միմյանց կապելու Մոսկվայի շահագրգռվածությունը մեծացավ, քանի որ Մոսկվան ձգտում էր փոխել առևտրային երթուղիները՝ Արևմուտքից դրանք շրջելով դեպի Արևելք։ 2023թ-ին Ռուսաստանն ու Իրանը համաձայնագիր են ստորագրել երկաթուղային ցանցի շինարարության ավարտի վերաբերյալ՝ արդյունքում ակնկալելով Պարսից ծոցի իրանական նավահանգիստներից Ադրբեջանի տարածքով դեպի Ռուսաստան տանող[70] միասնական համակարգի ստեղծում: Քննարկվում են նաև Ռուսաստանի և Իրանի միջև ուղիղ հաղորդակցությունը Կասպից ծովով, ինչպես նաև Թուրքմենստանով և Ղազախստանով անցնող երթուղին։ Իրանը նաև առաջարկել է «Պարսից ծոց – Սև ծով» միջանցքի նախագիծը, որի նպատակն է Իրանը Եվրոպայի հետ կապել Հայաստանի, Վրաստանի և Սև ծովի միջոցով[71]։

## Հայաստանի «Խաղաղության խաչմերուկը»

2023թ-ի հոկտեմբերին Թբիլիսիում կայացած «Մետաքսի ճանապարհ» ֆորումի ժամանակ Հայաստանի կառավարությունը ներկայացրեց տարածաշրջանային փոխգործակցության իր տեսլականը՝ «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը[72]։ Այն նախատեսում է տարածաշրջանային բոլոր կոմունիկացիաների վերաբացում, ինչը թույլ կտա Ադրբեջանին մուտք գործել Թուրքիա Հայաստանի տարածքով, իսկ Իրանին Հայաստանի տարածքով հասնել Վրաստան, Սև ծով և Ռուսաստան: Նախագիծը նախատեսում է պետությունների ինքնիշխանությունն իրենց տարածքով անցնող երթուղիների նկատմամբ։ Այս տեսլականին աջակցելու համար Հայաստանի կառավարությունը ձեռնամուխ է եղել ենթակառուցվածքների կատարելագործմանը Սյունիքի մարզում, որը սահմանակցում է Իրանին: Այնուամենայնիվ, այս նախագծի իրականացման համար անհրաժեշտ կլինի զգալի ժամանակ[73]։

# Հայաստանի արտաքին քաղաքականություն. առանցքային ուղղություններ

## Հայ-ադրբեջանական հարաբերություններ. ի՞նչ սպասել ապագայում

Ադրբեջանի հետ հարաբերությունները, թերևս, ամենակարևորն են Հայաստանի համար: Արդեն 34 տարի շարունակվող հայ-ադրբեջանական կոնֆլիկտը վերջին տարիներին զգալիորեն սրվել է, քանի որ Ադրբեջանը ռազմական ուժ է կիրառել Լեռնային Ղարաբաղը ոչնչացնելու, տեղի հայ բնակչությանը բռնի տեղահանելու և Հայաստանի տարածքի մոտ 200 քառակուսի կիլոմետրը գրավելու համար: Ադրբեջանի կողմից առաջ քաշվող «Արևմտյան Ադրբեջանի» և «Զանգեզուրի միջանցքի» հայեցակարգերը ուղղակի սպառնալիք են Հայաստանի տարածքային ամբողջականության համար, և դրանց իրագործումը զգալիորեն կթուլացնի Հայաստանի պետականությունը: Սույն նախագծի շրջանակներում հարցված գրեթե բոլոր փորձագետները պնդում են, որ Ադրբեջանի հետ հարաբերություն-ների կառավարումը կդառնա Հայաստանի արտաքին քաղաքականության առաջիկա տարիների առանցքային մարտահրավեր: Նրանք նաև կասկածի տակ են դնում խաղաղության համաձայնագրի ստորագրման հավանականությունը և մտահոգություն են հայտնում, որ Ադրբեջանը կարող է կրկին ուժ կիրառել քաղաքական ձեռքբերումներ ունենալու համար:

Հայաստանն ու Ադրբեջանը 2025 թվական են մուտք գործել առանց որևէ համաձայնության, և հաշվի առնելով վերջինիս նախապայմանները, համաձայնա-գիրը դժվար թե ստորագրվի այս տարի: Ռազմական հաշվեկշիռը ներկայումս հօգուտ Ադրբեջանի է, և չնայած 2025թ-ի մարտին խաղաղության համաձայնագրի նախագծի համաձայնեցմանը[74]՝ Հայաստանը շարունակում է բախվել Ադրբեջանի ներխուժման վտանգին կամ դրա սպառնալիքին[75]:

Ադրբեջանի կողմից հակամարտության սրման հիմնական պատճառ կարող է լինել այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» ուժի միջոցով բացումը, որի արդյունքում կազատագրվեն «պատմական ադրբեջանական հողերը»՝ «Արևմտյան Ադրբեջանի» հայեցակարգի շրջանակներում, կամ կհեշտացնի Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի միջև կապը Ադրբեջանի միջոցով՝ հանուն թյուրքական աշխարհի միավորման:

Բաքուն կարող է էսկալացիայի դիմել նաև ներքաղաքական պատճառներով: Ադրբեջանի ղեկավարության գերագույն առաջնահերթությունն է իր ընտանիքի իշխանության հավերժական պահպանումը, իսկ բոլոր մյուս նկատառումները ստորադաս են դրան, և այդ տեսանկյունից Հայաստանը շահարկվում է որպես «օգտակար թշնամի»[76]:

Ադրբեջանը կարող է նաև փորձել գնալ էսկալացիայի՝ ներկայումս ավելի խոցելի դարձած հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով իր դիրքերն ամրապնդելու, ռազմավարական բարձունքների գրավումից հետո Հայաստանի ռազմավարական ենթակառուցվածքի նկատմամբ ավելի մեծ վերահսկողություն ձեռք բերելու, կամ Հայաստանի սահմանամերձ շրջաններում ներդրումների իրականացմանը խոչընդոտելու համար: Ադրբեջանը շարունակում է հավատարիմ մնալ

տարածաշրջանային նախագծերից Հայաստանի մեկուսացման ռազմավարության՝ օրինակ, Սևծովյան ստորջրյա մալուխի անցկացման դեպքում[77]:

Այս պայմաններում Հայաստանի հիմնական նպատակը պետք է լինի Ադրբեջանի կողմից հնարավոր էսկալացիայի կանխարգելումը: Դրան հնարավոր է հասնել Ադրբեջանի նոր ագրեսիայի գինը ռազմական, դիվանագիտական և տնտեսական առումով Բաքվի համար մեծացնելու և Բաքվի հետ դիվանագիտական փոխգործակցությունը շարունակելու միջոցով:

## Առաջարկներ

- Հայաստանը պետք է շարունակի բանակցություններն Ադրբեջանի հետ և տեղեկացնի արտաքին մասնակիցներին՝ խաղաղության համաձայնագրի համաձայնեցված տեքստը ստորագրելու պատրաստակամության մասին:
- Հայաստանը պետք է շարունակի իրականացնել ռազմական բարեփոխումներ և բանակի արդիականացում, գնել ռազմական տեխնիկա և հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով կառուցել ամրաշինություններ:

## Հայ-թուրքական հարաբերություններ. հնարավո՞ր է արդյոք կարգավորումը

1991թ-ին Խորհրդային Միությունից Հայաստանի անկախացումից ի վեր երկրի արտաքին քաղաքականության գլխավոր առաջնահերթություններից մեկն է Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը: Դա պայմանավորված է ինչպես տնտեսական պատճառներով՝ շրջափակումը դադարեցնելու և Թուրքիայի միջերկրածովյան նավահանգիստներ մուտքի դյուրացման անհրաժեշտությամբ, այնպես էլ քաղաքական նկատառումներով՝ ադրբեջանա-թուրքական գործընկերությունը թուլացնելու միտումով:

Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման կարևոր մասն է, որը թույլ կտա Հայաստանին նվազեցնել իր կախվածությունը Ռուսաստանից: Եվս մեկ շարժառիթ է Թուրքիայի հնարավոր դերակատարումը՝ Ադրբեջանին խաղաղության համաձայնագիրը ստորագրել դրդելու կամ առնվազն Ադրբեջանի նոր լայնածավալ հարձակումը կանխարգելելու գործում:

Այս ուղղությամբ քայլերն ակտիվացան 2022թ-ի հունվարին, երբ հատուկ ներկայացուցիչները հանդիպեցին Մոսկվայում[78]: Վարչապետ Փաշինյանը մի շարք հանդիպումներ է ունեցել նախագահ Էրդողանի հետ՝ վերջինը 2024թ-ի սեպտեմբերին Նյու Յորքում: Հայաստանն ու Թուրքիան հասել են մի շարք համաձայնությունների, ներառյալ երրորդ երկրների քաղաքացիների համար սահմանների բացման և ուղիղ ավիաբեռնափոխադրումների մեկնարկման վերաբերյալ, բայց դրանք դեռևս չեն իրականացվել:

Սույն հետազոտության շրջանակներում հարցված փորձագետների հիմնական մասը ընդգծել է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նշանակությունը՝ Հայաստանի կայունության և անվտանգության համար, և պնդել է, որ չնայած վերջին երեք տարիների ընթացքում նշանակալի

առաջընթացի բացակայությանը, Երևանը պետք է շարունակի Անկարայի հետ այս փոխգործակցությունը:

### Առաջարկներ

- Թուրքիային տեղյակ պահել այն մասին, որ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման հնարավորությունը հավերժ չի տևի, և դրա բացակայությունը կարող է խանգարել Թուրքիային էլ ավելի ամրապնդել իր ազդեցությունը Հարավային Կովկասում:
- Առաջարկել քննարկել հայ-թուրքական հարաբերությունները Բրյուսելի, Վաշինգտոնի և Անկարայի շփումների շրջանակներում:

## Հայ-վրացական հարաբերություններ. ճանաչի՞ր հարևանիդ

Վրաստանի հետ հարաբերություններն առաջնային նշանակություն ունեն Հայաստանի համար, քանի որ այս երկրի հետ ընդհանուր սահմանը Հայաստանի երկու բաց սահմաններից մեկն է, և այն ապահովում է արտերկրի հետ կենսական նշանակության երթուղիներ: Այդ երթուղիները Հայաստանին հնարավորություն են տալիս մուտք գործել Ռուսաստան, Սև ծով և Եվրոպա: Թեև 1991թ-ի անկախությունից ի վեր Հայաստանին և Վրաստանին կապում են բարեկամական հարաբերություններ, դրանք ռազմավարական խորության պակաս ունեն: Ադրբեջանի հետ, սակայն, Վրաստանն ունի ռազմավարական գործընկերություն, որի հիմքն է հանդիսանում 1997թ-ին ստորագրված ռազմավարական համագործակցության խորացման հռչակագիրը[79], ինչպես նաև Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան եռակողմ գործընկերությունը, որը հաստատվել է 2012թ-ի Տրապիզոնի Հռչակագրի ստորագրմամբ: Ռուսաստանի հետ Վրաստանի լարված հարաբերություններն էլ ավելի են նպաստել Թուրքիայի հետ նրա կապերին: Թբիլիսին նաև ձգտում է հավասարակշռել Մոսկվայի ազդեցությունը՝ որդեգրելով եվրաատլանտյան ինտեգրման քաղաքականություն և ԵՄ-ին ու ՆԱՏՕ-ին անդամակցությունը դարձնելով իր արտաքին քաղաքականության անկյունաքարը:

Հայաստանի արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացիան էապես փոխել է Վրաստանի նկատմամբ Հայաստանի քաղաքականությունը: ԵՄ-ի և ԱՄՆ-ի հետ հարաբերությունների խորացումն ամրապնդեց Վրաստանի դերը՝ որպես Հայաստանի համար դեպի Արևմուտք կարևոր դարպաս: Ըստ հարցազրույցների մասնակիցների՝ եվրաատլանտյան ինտեգրման ճանապարհին Վրաստանի փորձը ընկալվում է որպես օգտակար ուղենիշ Հայաստանի համար: Հայաստանը դիտարկում է Վրաստանը նաև որպես Թուրքիայի և Ադրբեջանի հետ քննարկումներ ունենալու ռազմավարական հարթակ[80]:

Հայաստանը որդեգրել է հարևան երկրի հետ հարաբերությունների խորացման քաղաքականություն, որի գլխավոր ձեռքբերումը 2024թ-ի հունվարին Հայաստանի և Վրաստանի միջև ստորագրված ռազմավարական գործընկերության վերաբերյալ համատեղ հռչակագիրն է[81]:

2024թ-ին Վրաստանի և Արևմուտքի միջև հարաբերությունների վատթարացումը, սակայն, բարդացրեց Հայաստանի ձգտումն՝ ակտիվացնել իր փոխգործակցությունն Արևմուտքի հետ: Հայաստանը հայտնվել է մի տարածաշրջանում, որտեղ ոչ մի այլ պետություն շահագրգռված չէ Արևմուտքի ներկայության ուժեղացմամբ:

Վրաստանի ներքաղաքական զարգացումներից անկախ՝ Հայաստանի համար շարունակում է կարևոր լինել այդ երկրի կայունությունը, անվտանգությունն ու բարգավաճումը, ինչպես նաև Թբիլիսիի հետ ռազմավարական գործընկերությունը: Այս սկզբունքը եղել և շարունակում է հիմք հանդիսանալ Վրաստանի նկատմամբ Հայաստանի քաղաքականության համար: Այս հետազոտության շրջանակներում հարցված փորձագետները նաև շեշտել են Հայաստանի կողմից Վրաստանի հետ հարաբերությունների ամրապնդման կարևորությունը, իսկ ոմանք շեշտել են, որ Հայաստանը կարող է միջնորդ դառնալ Վրաստանի և ԵՄ-ի միջև:

## Առաջարկներ

- Հայաստանը պետք է զարգացնի ռազմավարական գործընկերությունը երկկողմ հարաբերությունների խորացման համար: Վերլուծական կենտրոնները և քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունները պետք է աջակցեն այդ ջանքերին՝ առաջարկելով ոլորտներ երկու երկրների միջև գործընկերությունն ամրապնդելու համար՝ հատկապես տնտեսական քաղաքականության և ենթակառուցվածքային նախագծերի ոլորտում:
- Հայաստանը պետք է ընդգծի Վրաստանի հետ կառուցողական փոխգործակցության պահպանման կարևորությունը իր արևմտյան գործընկերների համար: Վրաստանի մեկուսացումը կարող է խաթարել Արևմուտքի տարածաշրջանային շահերը և սահմանափակել դիվերսիֆիկացված արտաքին քաղաքականություն վարելու Հայաստանի կարողությունը:
- Հայաստանը պետք է ավարտի դեպի հայ-վրացական սահման բարձրավոլտ էլեկտրահաղորդիչ գծի շինարարությունը: Դա կնպաստի Հյուսիս-Հարավ էներգետիկ միջանցքի գործարկմանը, ինչպես նախատեսված է 2016թ-ի բազմակողմ ճանապարհային քարտեզով:

## Հայ-իրանական հարաբերություններ. բարեկամությունից դեպի գործընկերություն

1991թ-ին անկախություն ձեռք բերելուց ի վեր Հայաստանը բարեկամական հարաբերություններ է հաստատել Իրանի հետ: Իրանի, ինչպես և Վրաստանի հետ, Հայաստանն ունի բաց սահման և, հետևաբար, Իրանը, կարևոր է Հայաստանը աշխարհին և, մասնավորապես, գլոբալ հարավին կապելու տեսանկյունից: 2007թ-ին Հայաստան-Իրան գազատարի գործարկումը[82] և «գազ էլեկտրաէներգիայի դիմաց» փոխանակման սխեման կարևոր տնտեսական բաղադրիչ դարձան երկկողմ հարաբերությունների համար:

ԵԱՏՄ-Իրան ազատ առևտրի մասին 2023թ-ի դեկտեմբերի համաձայնագիրը[83] նույնպես կարող է ամրապնդել Հայաստանի դիրքերը, քանի որ ԵԱՏՄ անդամ երկրներից միայն Հայաստանն ունի ցամաքային սահման Իրանի հետ: Տրանսպորտային միջանցքների նախագծերը, ինչպիսիք են «Պարսից ծոց - Սև ծով» միջանցքը, կարող են վերափոխել Հայաստանը առանցքային տարանցիկ

երկրի, որը կապում է Իրանն ու Հնդկաստանը Եվրոպայի հետ: Այս նախագծերը կխաթարեն նաև Հայաստանի մեկուսացմանն ուղղված Ադրբեջանի և Թուրքիայի ջանքերը, ինչը Իրանի հետ հարաբերությունները կդարձնի էլ ավելի կենսական Հայաստանի համար:

Երբ Հայաստանն սկսեց դիվերսիֆիկացնել իր արտաքին քաղաքականությունը, Իրանի հետ հարաբերությունները դարձան Երևանի գլխավոր առաջնահերթություններից մեկը: ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման ընթացքում Հայաստանի դիրքորոշումը եղել և մնում է պարզ և անփոփոխ՝ Երևանը չի ներգրավվելու Իրանի Իսլամական Հանրապետության դեմ որևէ գործողության[84]:

Իրանի հետ փոխգործակցությունը 2024թ-ին հանդիսացել է Ադրբեջանին զսպելու առանցքային բաղադրիչներից մեկը: Այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» դեմ Իրանի առարկությունները կրում են ռազմավարական և աշխարհաքաղաքական բնույթ: «Զանգեզուրի միջանցքը» սպառնում է կտրել Իրանը Հայաստանի և ԵԱՏՄ շուկայի հետ իր ցամաքային կապից, ինչն էլ ավելի կնվազեցնի Թեհրանի նշանակությունը տարածաշրջանում: Այնուամենայնիվ, չի կարելի ակնկալել, որ այդ հակազդեցությունն անպայման կվերածվի Իրանի կողմից միջանցքի բացման կանխարգելմանն ուղղված իրական գործողությունների՝ հաշվի առնելով Իրանի վերջին անհաջողություններն ու ռեսուրսների գերլարումը: Չնայած այդ կապակցությամբ Իրանի պաշտոնատար անձանց բազմաթիվ հայտարարություններին՝ Հայաստանը պետք է պատրաստ լինի սցենարին, որի դեպքում Իրանը, ի վերջո, կարող է ի վիճակի չլինել կանխել «միջանցքի» բացումը:

Հայ-իրանական հարաբերությունների վրա ազդող մեկ այլ գործոն է Իսրայելի, Արևմուտքի և Իրանի միջև պահպանվող լարվածությունը, որը սրվել է Ուկրաինայի պատերազմի ընթացքում Ռուսաստանին տրամադրված Իրանի աջակցության արդյունքում: Իրանի նկատմամբ «առավելագույն ճնշման» վերաբերյալ Դոնալդ Թրամփի հայտարարած մոտեցումը կարող է բացասաբար ազդել հայ-իրանական հարաբերությունների վրա, մինչդեռ ԱՄՆ-Իրան գործարքը կարող է նոր հնարավորություններ ստեղծել Հայաստանի համար:

## Առաջարկներ

- Հայաստանի կառավարությունը պետք է ակտիվացնի Իրանի հետ տնտեսական համագործակցությունը՝ հաշվի առնելով երկու երկրների ռազմավարական դիրքը՝ որպես դարպաս դեպի ԵԱՏՄ և Հնդկաստանի շուկաներ: Պետք է հաշվի առնել նաև սահմանափակող գործոնները, ինչպիսիք են պատժամիջոցները և իրական հնարավորությունները:
- Հայաստանը պետք է շարունակի աջակցել իրանական ընկերությունների մասնակցությանը ենթակառուցվածքային նախագծերին Քաջարան-Ագարակ մայրուղու շինարարության օրինակով:
- Հայաստանը պետք է գնահատի իրանական Չաբահար նավահանգստի արտահանման և ներմուծման ներուժի օգտագործման հնարավորությունները:

## Հայ-ռուսական հարաբերություններ. վերագործարկման անհրաժեշտություն

Չնայած Ուկրաինայում ընթացող պատերազմին և Երևանի և Մոսկվայի միջև լարված հարաբերություններին՝ Ռուսաստանն, ամենայն հավանականությամբ, կմնա Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական դինամիկայի շարժիչ ուժը։ Վերջին 34 տարիների ընթացքում հաստատված հարաբերությունների խորությունը, ծավալը և շրջանակը Ռուսաստանին տրամադրել են Հայաստանի նկատմամբ ազդեցության զգալի լծակներ, ներառյալ Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ-ին և ԵԱՏՄ-ին։ Վերջին 4 տարիների ընթացքում Երևանի և Մոսկվայի միջև հարաբերություններն էական փոփոխություն են կրել. ռազմավարական դաշնակցից Ռուսաստանը վերածվել է խնդրահարույց գործընկերոջ: Ներկայումս երկու կողմերն էլ կուտակել են միմյանց դեմ դժգոհությունների երկար ցուցակ։

Հայաստանի կառավարությունը գտնում է, որ 2021 և 2022 թվականներին Ռուսաստանը չկատարեց 1997թ-ի երկկողմ համաձայնագրով նախատեսված իր պարտականությունները՝ Հայաստանի տարածքը Ադրբեջանի ներխուժումից պաշտպանելու վերաբերյալ: Ավելին, Ռուսաստանը չկանխեց Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի ռազմական գրավումը 2023թ-ի սեպտեմբերին[85]: Վիճահարույց կարևոր կետերից մեկն է Ռուսաստանի պնդումը 2020թ-ի նոյեմբերի 10-ի եռակողմ հայտարարության 9-րդ հոդվածի կատարման վերաբերյալ, մինչդեռ մնացած դրույթները ուժը կորցրել են՝ դրանք Ադրբեջանի և Ռուսաստանի կողմից չկատարելու արդյունքում։

Մյուս կողմից, Ռուսաստանը մեղադրում է Հայաստանին դեպի Արևմուտք շրջադարձ կատարելու, ԵՄ-ի և ԱՄՆ-ի հետ համագործակցությունը խորացնելու[86], ԵՄ դիտորդներին Հայաստան հրավիրելու[87], միևնույն ժամանակ ՀԱՊԿ-ին անդամակցությունը սառեցնելու և կառույցին բացահայտ քննադատելու համար[88]։

Հայաստանը նաև կտրուկ կրճատել է Ռուսաստանի հետ իր ռազմատեխնիկական համագործակցությունը։ Մի քանի տարի առաջ Հայաստանն իր սպառազինության ավելի քան 90%-ը ստանում էր Ռուսաստանից, այնինչ 2025թ-ի սկզբի դրությամբ այս թիվը նվազել է՝ հասնելով 10%-ից ցածր ցուցանիշի, իսկ Հնդկաստանն ու Ֆրանսիան դարձել են Հայաստանի հիմնական գործընկերները պաշտպանական համագործակցության ոլորտում։

Չնայած քաղաքական լարվածությանը՝ երկկողմ տնտեսական կապերը զարգանում են: 2024թ-ին ապրանքաշրջանառությունը հասել է 12.401 միլիարդ դոլարի[89]։ Ռուսաստանը շարունակում է մնալ Հայաստանի արտահանման հիմնական ուղղությունը և հանդիսանում է մի շարք ռազմավարական ներմուծվող ապրանքների, այդ թվում՝ ցորենի, հիմնական աղբյուրը[90]։ Աճող տնտեսական հարաբերությունները Ռուսաստանին լրացուցիչ հնարավորություններ են ընձեռում՝ դրանք Հայաստանի նկատմամբ որպես ճնշման լծակ օգտագործելու համար, եթե Մոսկվան դա նպատակահարմար գտնի։

Վերջին իրադարձությունները լրջորեն ազդել են նաև հայ հասարակության կողմից Ռուսաստանի ընկալման վրա։ Եթե 2018թ-ին հայերի ճնշող մեծամասնությունը Ռուսաստանը դիտարկում էր որպես բարեկամ երկիր, ապա այժմ այդ ցուցանիշը

կտրուկ նվազել է, ինչի մասին վկայում է Միջազգային Հանրապետական Ինստիտուտի վերջին հարցումը[91]:

Հայ-ռուսական հարաբերություններում առկա անորոշությունը կարող է լուրջ խնդիրներ ստեղծել: Հարցումներին մասնակցած գրեթե բոլոր փորձագետները նշում են, որ կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում Ռուսաստանն, ամենայն հավանականությամբ, կմնա Հարավային Կովկասում առանցքային արտաքին ուժերից մեկը՝ պահպանելով տարածաշրջանում աշխարհաքաղաքականության վրա ազդեցության զգալի լծակներ, և Հայաստանը պետք է հաշվի առնի այդ փաստը:

Վերջին տարիներին նկատվում է ռուս-ադրբեջանական համագործակցության նկատելի աճ, որն ամրագրվել է 2022թ-ի փետրվարին ընդունված ռազմավարական փոխգործակցության մասին հայտարարությամբ[92]: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի 2024թ-ի օգոստոսին Ադրբեջան կատարած պետական այցն այս գործընկերության բարձր մակարդակի վառ ցուցանիշ է[93]: Ռուսաստանն ու Ադրբեջանը կիսում են այն տեսլականը, որ տարածաշրջանային հակամարտությունները պետք է կառավարեն և կարգավորեն տարածաշրջանային տերությունները, և երկուսն էլ աջակցում են տարածաշրջանային համագործակցության «3+3» ձևաչափին[94]:

Ստեղծված իրավիճակում Ռուսաստանը կարող է որոշում կայացնել իրագործել իր շահերը Հարավային Կովկասում Ադրբեջանի հետ ռազմավարական գործընկերության միջոցով՝ չնայած վերջին շրջանում առաջացած լարվածությանը 2024թ-ի դեկտեմբերին AZAL-ի Բաքու-Գրոզնի չվերթի ողբերգական միջադեպի հետևանքով[95]: Ադրբեջանը կարող է ակտիվորեն խրախուսել նման ընկալումը Ռուսաստանի ղեկավարության շրջանում տարբեր եղանակներով, ներառյալ ռուս փորձագետների և ակադեմիական շրջանակների ֆինանսավորմամբ՝ ներկայացնելով Հայաստանը Ռուսաստանի հակառակորդ, իսկ Ադրբեջանը Ռուսաստանի բարեկամ պետություն: Նման զարգացումը հղի է Երևանի և Մոսկվայի հարաբերությունների հետագա սրմամբ: Այս ռիսկը կարող է նաև մեծանալ, եթե Թրամփի նոր վարչակազմի օրոք Ռուսաստանը և ԱՄՆ-ը ձեռք բերեն «Ուկրաինայի վերաբերյալ փոխըմբռնում», քանի որ միջնաժամկետ հեռանկարում Ռուսաստանն ավելի շատ հնարավորություններ կստանա տարածաշրջանային աշխարհաքաղաքականությունը ձևավորելու համար:

Նման սցենարի դեպքում Մոսկվան, ամենայն հավանականությամբ, ռեսուրսները կուղղի հետխորհրդային տարածք, ներառյալ Հարավային Կովկասը, ինչը կարող է թուլացնել ԱՄՆ-ի ջանքերը՝ տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունը զսպելու ուղղությամբ, որը նախորդ՝ Բայդենի վարչակազմի գործողությունների հիմքում ընկած հիմնական գործոնն էր:

### Առաջարկներ

- Հայաստանը պետք է քարտեզագրի իր և Ռուսաստանի հիմնական շահերը Հարավային Կովկասում, որպեսզի հասկանա, թե որտեղ են այդ շահերը համընկնում, և որտեղ՝ ոչ։
- Հայաստանը պետք է շարունակի Ռուսաստանին պարզաբանել իր արտաքին քաղաքականության ռազմավարության առանցքային նպատակները։
- Հայաստանը պետք է քայլեր ձեռնարկի հայ-ռուսական փորձագիտական երկխոսության վերսկսման համար (այն մեկնարկել էր 2022թ-ի գարնանը), որպեսզի ավելի լավ ներկայացնի Հայաստանի դիրքորոշումը ռուս փորձագիտական շրջանակներին և հակակշիռ ստեղծի Ադրբեջանի կողմից ներկայացվող պատկերին։

## Հայաստան-ԵՄ հարաբերություններ. ամրապնդելով առաջընթացը

2024թ-ին ԵՄ-ն հանդիսացել է Հայաստանի ամենակարևոր դիվանագիտական գործընկերը, և վերջին տասնամյակում այս հարաբերություններն ամենամեծ փոփոխությունն են կրել։ Այս վերելքն արձանագրվել է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հայության դեմ Ադրբեջանի ագրեսիայի հաջորդական գործողություն-ների ժամանակաշրջանում՝ աջակցելու Հայաստանի դիմակայունությանը[96]։

Հարաբերությունների նման փոխակերպումը ակնհայտ է համագործակցության այնպիսի աննախադեպ ոլորտներում, ինչպիսիք են անվտանգության ասպարեզում ՀԵՄԱ-ի գործունեությունը, Եվրոպական Խաղաղության Հիմնադրամից միջոցների հատկացումը, մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ բանակցությունների մեկնարկը և զարգացման փուլում գտնվող տնտեսական և ինստիտուցիոնալ այլ ոլորտները։ Այս տարի նախատեսվում է ստորագրել ԵՄ-Հայաստան գործընկերության նոր օրակարգի վերաբերյալ փաստաթուղթը՝ ի լրումն ԵՄ–Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի։

Հիմնվելով այս դրական ազդակի վրա՝ Հայաստանի քաղաքական ուժերը, ներառյալ իշխող կուսակցությունը, հայտարարել են, որ Հայաստանը պետք է սկսի ԵՄ-ին անդամակցության գործընթաց՝ Ազգային ժողովում համապատասխան օրինագիծ ընդունելով[97]։ Սույն հետազոտության շրջանակներում հարցված փորձագետները ընդգծել են, որ Հայաստան-ԵՄ հարաբերություններում արձանագրված դինամիկան Հայաստանի արտաքին քաղաքականության ամենանշանակալի ձեռքբերումն էր ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո։ Հայաստանը պետք է շարունակի հարաբերությունները զարգացնելու և ամրապնդելու ջանքերը։

Չնայած հարաբերությունների դրական դինամիկային և երկկողմ հարաբերությունների խորացման հարցում իրական առաջընթացին՝ չի կարելի անտեսել մի քանի հանգամանք։  ԵՄ-ն տարածաշրջանի վերաբերյալ չունի միասնական տեսլական, իսկ Հայաստանի կառավարությունը ոչ միանշանակ դիրքորոշում ունի ԵԱՏՄ-ում իր ապագայի վերաբերյալ՝ այն էլ ԵՄ-ի հետ ընդհանուր սահման չունեցող տարածաշրջանում։ Հարավային Կովկասի

նկատմամբ ամբողջական մոտեցման բացակայությունը, որի մասին խոսվել է մեր 2024թ-ի զեկույցում, ընդունել է նաև Եվրոպական հանձնաժողովը։ Կառույցի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը ընդլայնման հարցերով եվրահանձնակատար Մարտա Կոսին վերջինիս առաքելության վերաբերյալ ուղղված նամակում հանձնարարել է «մշակել Հարավային Կովկասի երկրների աջակցության համակարգված մոտեցում»[98]։ Պարզ չէ նաև, թե ինչպես է Հայաստանը կարգավորելու ԵԱՏՄ-ի անդամակցությունից բխող խնդիրները, ինչպես նաև ԵՄ-ից Վրաստանի և Թուրքիայի հեռանալու հարցերը։ Այս երկու երկրները ԵՄ անդամակցության առումով բավական բարդ թեկնածուներ են։

Բացի այդ, տարածաշրջանային աշխարհաքաղաքական իրադարձություններին ԵՄ-ի արձագանքը բացահայտեց դրա ներգրավվածության սահմանները։ Չնայած 2022-2023թթ-ին ԵՄ միջնորդությամբ Հայաստանի և Ադրբեջանի միջև տեղի ունեցած բանակցություններին՝ ԵՄ-ն չի կարողացել խանգարել Ադրբեջանին 2023թ-ի սեպտեմբերին ուժ կիրառել Լեռնային Ղարաբաղի նկատմամբ։ Ավելին, դրան հաջորդած ժամանակահատվածում ԵՄ անդամ 27 պետությունների շրջանում միասնական քաղաքականության բացակայությունը խոչընդոտեցին Հայաստանին համարժեք աջակցություն ցուցաբերելու հարցում[99]։

Հաշվի առնելով այս բարդ և անորոշ իրավիճակը՝ լավագույն մոտեցումն է զարգացնել դրական շարժը՝ ամրապնդելով փոխգործակցությունն այն ոլորտներում, որտեղ ԵՄ-ն ուժեղ է։

## Առաջարկներ

- Հայաստանի կառավարությունը պետք է առաջնահերթություն տա ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) լիակատար իրականացմանը՝ որպես ԵՄ-ի հետ համագործակցության խորացման համար առանցքային գործիքի։ Այս նպատակին հասնելու վերջնաժամկետը պետք է դառնա 2029թ-ը՝ մինչև ԵՄ-ի ներկայիս ղեկավարության պաշտոնավարման ժամկետի ավարտը։
- Հայաստանի կառավարությունը 2029թ-ը պետք է սահմանի որպես վերջնաժամկետ՝ ԵՄ-ի հետ մուտքի արտոնագրերի ազատականացման նպատակով անհրաժեշտ բարեփոխումներ իրականացնելու համար։
- Հայաստանը պետք է մանրամասն առաջարկներ պատրաստի 2027թ-ին հաջորդող ժամանակաշրջանում ԵՄ-ի կայունության և տնտեսական աճի բարձրացման նոր ծրագրի համար։ Կարելի է շեշտել երեք հիմնական ոլորտ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե որտեղ է ԵՄ-ն ավելի ուժեղ.
  - ենթակառուցվածքների զարգացում՝ շեշտը դնելով Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի վրա
  - պետական կառավարման բարեփոխում
  - տնտեսության դիվերսիֆիկացում
- ԵՄ-ի հետ փոխգործակցության ընթացքում Հայաստանը պետք է հետևողականորեն բարձրացնի Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների և Լեռնային Ղարաբաղում և հարակից տարածքներում հայկական քրիստոնեական ժառանգության ոչնչացման խնդիրները։ Հայաստանը պետք է կոչ անի ԵՄ-ին՝ հասցեագրել այս մտահոգությունները Ադրբեջանին։

- Հայաստանը պետք է շարունակի զարգացնել իր հարաբերությունները տարածաշրջանում տնտեսապես կամ քաղաքականապես ներգրավված ԵՄ անդամ պետությունների հետ, ինչպիսիք են Ֆրանսիան, Լեհաստանը, Հունգարիան, Իտալիան և Գերմանիան, և/կամ զարգացնի կոլեկտիվ գործընկերություն ԵՄ առանձին անդամների հետ։

## Հայ-ֆրանսիական հարաբերություններ. նոր գործընկեր պաշտպանության ոլորտում

Ֆրանսիայի հետ հարաբերությունները միշտ կարևորվել են Հայաստանի համար։ Դրանք իրենց արմատներն ունեն պատմության մեջ՝ հանձինս 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Ֆրանսիայում հայամետ շարժումների և մեծաթիվ հայկական սփյուռքի։

Հայ-ֆրանսիական հարաբերությունները նոր թափ են ստացել 2022թ-ի սեպտեմբերին Հայաստանի դեմ Ադրբեջանի ագրեսիայից հետո։ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 101-րդ նստաշրջանի շրջանակներում Ֆրանսիան նախաձեռնեց Հայաստանի և Ադրբեջանի միջև ստեղծված իրավիճակի քննարկում[100] և աջակցեց ԵՄ դիտորդական առաքելության տեղակայմանը Հայաստանում՝ հայ-ադրբեջանական սահմանի մոնիտորինգի նպատակով։

Երբ Հայաստանը սկսեց իր արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման ծրագիրը՝ կենտրոնանալով ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ հարաբերությունների վրա, Ֆրանսիան դարձավ ԵՄ-ում Հայաստանի առանցքային գործընկերը։ 2023-2024թթ-ին սկիզբ դրվեց Հայաստանի և Ֆրանսիայի միջև պաշտպանության ոլորտում համագործակցությանը։

2023թ-ի հոկտեմբերին Հայաստանն ու Ֆրանսիան պաշտպանության ոլորտում ստորագրել են համագործակցության համաձայնագրեր, այդ թվում՝ կնքելով THALES-ռադարային համակարգերի գնման պայմանագիր[101]։ 2024թ-ի փետրվարին Երևան կատարած այցի ընթացքում Ֆրանսիայի զինված ուժերի նախարար Սեբաստիան Լըկորնյուին հայտնել է Հայաստանին ավելի շատ հեռահար համակարգեր վաճառելու Ֆրանսիայի պատրաստակամության մասին և հայտարարել է Հայաստան հակաօդային պաշտպանության ոլորտում ռազմական խորհրդական գործուղելու մասին[102]։ 2024թ-ի հունիսին Հայաստանն ու Ֆրանսիան համաձայնության են եկել Caesar ինքնագնաց հաուբիցների վաճառքի շուրջ[103]։ Ֆրանսիայի՝ ՀՀ նկատմամբ մոտեցման փոփոխությունը տեղի է ունեցել 2020թ-ի նոյեմբերի 10-ից հետո, երբ Ֆրանսիան թուրք-ռուսական տանդեմի կողմից սկսեց զգալ երկրորդ պլան մղված։ Որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ՝ Ֆրանսիան ձգտում է պահպանել ուժերի հավասարակշռությունը տարածաշրջանում։

Միևնույն ժամանակ, երկկողմ տնտեսական հարաբերությունները զգալիորեն զիջում են քաղաքական և պաշտպանական համագործակցությանը։ Ֆրանսիական խոշոր ընկերությունները Հայաստանում ներկայացված չեն՝ բացառությամբ Credit Agricole-ի, Amundi-ի, Pernod Ricard-ի և Veolia-ի։ 2023թ-ի համեմատ, 2024թ-ին երկու երկրների միջև առևտրի ծավալը նվազել է մոտ 11%-ով՝ հասնելով 158 միլիոն դոլարի։

## Առաջարկներ

- Հայաստանը պետք է շարունակի ընդլայնել պաշտպանական համագործակցությունը Ֆրանսիայի հետ՝ ներառյալ Հայաստանի զինված ուժերի մարտունակության արդիականացման հարցում:
- Հայաստանը պետք է ընդլայնի ֆրանսիական ընկերությունների ներկայությունը հայկական շուկայում և օգտագործի նրանց գիտելիքներն ու փորձը տնտեսության դիվերսիֆիկացման շրջանակներում՝ հայկական ձեռներեցությունը աստիճանաբար ԵՄ չափանիշներին մոտեցնելու համար:

## Հայ-ամերիկյան հարաբերություններ. հարմարվելով Թրամփի երկրորդ վարչակազմին

Հայ-ամերիկյան հարաբերությունները զարգանում են 1991թ-ի Հայաստանի անկախացումից ի վեր, և այդ հարաբերությունների առանցքային բաղադրիչներն էին ԵԱՀԿ Մինսկի խումբը, ԱՄՆ-ի հայկական սփյուռքը և Հայոց ցեղասպանության ճանաչումը: 2020թ-ի պատերազմից հետո, սակայն, հարաբերությունները սկսեցին ավելի շատ կենտրոնանալ երկկողմ կապերի խորացման և Հայաստանի դիմակայունության աջակցության վրա: 2025թ-ի հունվարի դրությամբ ԱՄՆ-ը Հայաստանում ներդրել է մոտ 3,3 մլրդ դոլար՝ ժողովրդավարական բարեփոխումներին, տնտեսական աճին և դիմակայունությանը աջակցելու համար, ներառյալ 340 միլիոն դոլար 2021թ-ից ի վեր[104]:

Վերջին շրջանում ԱՄՆ-ի հետ հարաբերությունների խորացումը հանդիսանում է Հայաստանի արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման կարևոր բաղադրիչներից մեկը: 2022-2024թթ-ին Հայաստանն այս հարաբերությունները դիտարկել է որպես գործոն, որը կարող էր զսպել Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի նոր ագրեսիան և աջակցել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը: Մինչև 2023թ-ի սեպտեմբեր Հայաստանը հույս ուներ, որ ԱՄՆ-ի հետ կապերի խորացումը կարող է ապահովել Լեռնային Ղարաբաղի հայերի անվտանգությունը և նպաստել Հայաստանի տնտեսության դիվերսիֆիկացմանը՝ հնարավորություններ ընձեռելով այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են, օրինակ, քաղաքացիական միջուկային էներգետիկան: 2022թ-ի սեպտեմբերին Ադրբեջանի ներխուժումից հետո Հայաստանը ողջունել է ԱՄՆ-ի դերի ուժեղացումը Հարավային Կովկասում[105]: Հայ-ամերիկյան հարաբերությունների նոր փուլի գագաթնակետն է դարձել 2025թ-ի հունվարին ստորագրված Ռազմավարական գործընկերության հանձնաժողովի Կանոնադրությունը[106]:

Թրամփի նախագահության շրջանում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունում Հայաստանի և տարածաշրջանի հնարավոր դերի ուսումնասիրությունը կենսական անհրաժեշտություն է: Թրամփի արտաքին քաղաքականության առանցքային խոստումներից մեկն Ուկրաինայում պատերազմի շուտափույթ դադարեցումն է, և նա նախաձեռնել է Ռուսաստանի հետ ուղիղ բանակցություններ՝ հրադադար հաստատելու համար[107]:

Հավանաբար, Ուկրաինայի հարցով ռուս-ամերիկյան բանակցությունների արդյունքից կախված կլինի նրա ակտիվ հետաքրքրությունը Հարավային Կովկասի և դրա բարդ տարածաշրջանային զարգացման դինամիկայի, երկկողմ

հարաբերությունների ընդհանուր վիճակի և դրա հետ սերտ կապեր պահպանող երկրների օրակարգի նկատմամբ։ ԱՄՆ-Ռուսաստան հարաբերությունների վերագործարկման դեպքում Թրամփը կարող է դեմ չլինել Ռուսաստանի ուժեղ ներկայությանը տարածաշրջանում, և հնարավոր է, այլևս չդիտարկի Հարավային Կովկասը՝ որպես Ռուսաստանին հակազդելու ռազմավարական թատերաբեմ։

ԱՄՆ-ը կարող է նաև շահագրգռված լինել հաջողության հասնել այնտեղ, որտեղ մյուսները ձախողել են՝ հանդես գալով որպես Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության գործարքի միջնորդ և ամրապնդելով խաղաղապահի իր իմիջը։ Այսպիսիք են ռազմավարական փոփոխականներից մի քանիսը, որոնք Հայաստանը պետք է հաշվի առնի մոտ ապագայում[108]։

Տարածաշրջանի համար ևս մեկ պոտենցիալ խնդիր է հանդիսանում Իրանի նկատմամբ Թրամփի քաղաքականությունը։ Թրամփը վերադարձել է իր «առավելագույն ճնշման» ռազմավարությանը՝ ռազմական հարվածներ հասցնելով Եմենի հուսիթներին[109] և միաժամանակ ցանկություն հայտնելով հասնել այս հարցում դիվանագիտական լուծման[110]։ Այս քաղաքականության հետևանքների գնահատումը բավական դժվար խնդիր է։ Իրանի հետագա թուլացումը կարող է նվազեցնել Հարավային Կովկասի աշխարհաքաղաքականության վրա ազդելու կամ իր «կարմիր գծերը» պաշտպանելու Թեհրանի կարողությունը՝ ներառյալ սահմանի ամբողջականության պահպանումն ու «Զանգեզուրի միջանցքին» հակազդելը։ Նման պայմաններում Ադրբեջանը կարող է օգտվել իրավիճակից՝ փորձելով ուժով բացել միջանցք Հայաստանի տարածքով։

Մյուս կողմից, ԱՄՆ-ի ու Իրանի միջև նոր գործարքի շուրջ համաձայնության գալու դեպքում Իրանի ազդեցությունը Հարավային Կովկասում կարող է ընդլայնվել, քանի որ Թեհրանն ավելի շատ ռեսուրսներ կստանա[111]։ Այս սցենարը կարող է Հայաստանին հնարավորություն ընձեռել Իրանի հետ իր տնտեսական համագործակցությունն ընդլայնելու և իրանական շուկա մուտք գործող եվրոպական և ամերիկյան ընկերությունների համար որպես դարպաս դիրքավորվելու համար։ Բացի այդ, ԱՄՆ-Իրան համաձայնագիրը կարող է թույլ տալ Հայաստանին զարգացնել պաշտպանական համագործակցությունն Իրանի հետ առանց Վաշինգտոնի բացասական արձագանքի։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագահ Թրամփն առաջնային է համարում ԱՄՆ-ի տնտեսական շահերը, անվտանգության խնդիրները և ազգային ինքնիշխանությունը, դրանք ամենայն հավանականությամբ, կգերակշռեն արժեքների վրա հիմնված գործոններին, օրինակ, ժողովրդավարության և մարդու իրավունքների խթանումը։ Սրա մասին է վկայում օտարերկրյա պետություններին հատկացվող ԱՄՆ ֆինանսավորման կրճատումը։

## Առաջարկներ

- Հայաստանը պետք է պատրաստ լինի Ուկրաինայում և Իրանում տարատեսակ սցենարների՝ ակտիվ համագործակցելով ԱՄՆ նոր վարչակազմի հետ։
- Գիտակցելով, որ ժողովրդավարության խթանումը նոր վարչակազմի շարժիչ ուժը չէ, Հայաստանը պետք է վերաձևակերպի հայ-ադրբեջանական և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված ջանքերում ԱՄՆ-ի

մասնակցությունը շարունակելու իր կոչը՝ ավելի լայն աշխարհատնտեսական շահերի համատեքստում։ Հայաստանը կարող է նաև փորձել համոզել նախագահ Թրամփին անձամբ աջակցել խաղաղության համաձայնագրի կնքմանը։

- Հաշվի առնելով նախագահ Թրամփի մերձավոր շրջապատի և ԱՄՆ-ի Ավետարանական քրիստոնեական համայնքի սերտ կապերը, Հայաստանը, որպես մարտավարական մոտեցում, պետք է ուժեղացնի կրոնական գործոնի կիրառումը Թրամփի վարչակազմի հետ շփումներում։
- Հայաստանը պետք է հետևողականորեն բարձրացնի Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների և Լեռնային Ղարաբաղում հայկական քրիստոնեական ժառանգության ոչնչացման խնդիրները։

## Հայ-հնդկական հարաբերություններ. գործնականից դեպի քաղաքական

1991թ-ի անկախացումից ի վեր Հայաստանը Հնդկաստանի հետ պահպանում է բարեկամական հարաբերություններ՝ դրանց հիմքում ունենալով պատմական կապերը, ինչպես նաև Խորհրդային Միության և Հնդկաստանի միջև շփումների դրական ժառանգությունը։ Այնուամենայնիվ, հարաբերությունները չունեին դիվանագիտական կամ տնտեսական խորություն, և իրավիճակը սկսեց փոխվել 2021թ-ին՝ Հնդկաստանի արտաքին գործերի նախարար Սուբրամանյամ Ջայշանկարի՝ Հայաստան կատարած այցից հետո[112]։ Իրական տեղաշարժ տեղի ունեցավ 2022թ-ի վերջին, երբ Հնդկաստանը դարձավ Հայաստան ներմուծվող սպառազինության առաջատար մատակարարը՝ նշանավորելով պաշտպանական համագործակցության նկատելի փոփոխությունները[113]։ Հայաստանը դիտարկել է Հնդկաստանի հետ աճող պաշտպանական գործընկերությունը որպես Ադրբեջանի հետ ուժային բացը փակելու միջոցներից մեկը և Հայաստանի զսպման ունակությունը ուժեղացնելու եղանակ։ Միաժամանակ, հաշվի առնելով Ռուսաստանի և Հնդկաստանի միջև բարիդրացիական հարաբերությունները՝ Հնդկաստանի հետ պաշտպանական համագործակցությունը չի հրահրել Ռուսաստանի վրդովմունքը՝ ինչպես Ֆրանսիայի հետ Հայաստանի ռազմական համագործակցության դեպքում։ Գլոբալ հարավի առաջատար պետություններից մեկի հետ հարաբերությունների խորացումը հանդիսանում է Հայաստանի կառավարության արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման կարևոր ազդանշան։

Այնուամենայնիվ, պաշտպանական ոլորտում համագործակցությունից դուրս այլ ոլորտներում աննշան առաջընթաց է նկատվում։ Հայաստանը կարող է Հնդկաստանին առաջարկել քաղաքական և տնտեսական գործընկերության զարգացման տեսլական՝ կենտրոնանալով պետությունների փոքր խմբերի ստեղծման ուղղությամբ, օրինակ, Հայաստան-Հնդկաստան-Ֆրանսիա ձևաչափով։ Եվս մեկ քայլ կարող է լինել պաշտպանական տեխնոլոգիաների փոխադարձ փոխանցումը և սպառազինությունների արտադրությունը Հայաստանում՝ ինչպես տեղական կարիքների, այնպես էլ արտերկրի շուկաներ արտահանման համար։

Հայ-հնդկական հարաբերությունների առանցքային ուղղություններից մեկը կարող է դառնալ տրանսպորտի և տարանցման ոլորտում համագործակցությունը, և հարցազրույցներին մասնակցած փորձագետների կարծիքով հենց այս ոլորտն

է պարունակում ամենամեծ ներուժը: Աշխարհաքաղաքական մրցակցության և տնտեսական վերափոխումների արդյունքում առաջացած մատակարարման շղթաների և լոգիստիկայի գլոբալ փոփոխությունների համատեքստում Ռուսաստանին և Եվրոպային հասնելու համար Հնդկաստանին անհրաժեշտ են այլընտրանքային երթուղիներ, և Հայաստանը կարող է առաջարկել.

- դեպի Ռուսաստան Իրան-Հայաստան-Վրաստան երթուղիով
- դեպի Եվրոպա Իրանի, Հայաստանի, Վրաստանի և Սև ծովի միջոցով

Չնայած որ Թեհրանի նկատմամբ արևմտյան պատժամիջոցները բարդացնում են նրա տարանցիկ ներուժը, որոշ իրադարձություններ մեծացնում են Հնդկաստանի համար Իրանի տարանցիկ հանգույց դառնալու հեռանկարները: Դրանք ներառում են Իրանի անդամակցությունը Շանհայի համագործակցության կազմակերպությանը և ԲՐԻՔՍ-ին, ԵԱՏՄ-ի հետ ազատ առևտրի համաձայնագրի ստորագրումը և Հնդկաստանի և ԵԱՏՄ-ի միջև առևտրային համաձայնագրի շուրջ ներկայումս ընթացող բանակցությունները[114]:

Այս երթուղիներից օգտվելու Հնդկաստանի կարիքը սերտորեն կապված է տարածաշրջանի կայունության հետ: Կայուն Հարավային Կովկասն անհրաժեշտ է լայնածավալ բեռնափոխադրումներ իրականացնելու համար: Ադրբեջանի հնարավոր հարձակումը և Հայաստանի տարածքների գրավումը դեպի Նախիջևան «Զանգեզուրի միջանցք» ստեղծելու համար կընդհատի Իրանի հետ Հայաստանի կապը՝ փաստացի արգելափակելով Իրան–Հայաստան–Վրաստան–Սև ծով կամ Իրան–Հայաստան–Վրաստան–Ռուսաստան երթուղիները:

## Առաջարկներ

- Հայաստանը կարող է առաջարկել նախարարների կամ փոխնախարարների մակարդակով ստեղծել հայ-հնդկական պետական հանձնաժողով տնտեսության և ներդրումների ոլորտներում: Այդ հանձնաժողովը կուսումնասիրի հնարավորությունները, կսահմանի նախագծեր և պետական աջակցություն կտրամադրի այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ռազմավարական տեղեկատվական տեխնոլոգիաները և դեղագործությունը:
- Հայաստանը պետք է բարձրացնի պաշտպանության ոլորտում համագործակցության առկա մակարդակը՝ հատուկ ուշադրություն դարձնելով պաշտպանական տեխնոլոգիաների փոխանցմանը և սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրությանը Հայաստանում:
- Հայաստանը կարող է Հնդկաստանին առաջարկել խորացնել քաղաքական երկխոսությունն ու կապերը, ներառյալ միջազգային փոքր խմբավորումների ստեղծումը:
- Հայաստանը պետք է նպաստի երկու սփյուռքի միջև ավելի սերտ համակարգմանը՝ հաշվի առնելով 2024թ-ի դեկտեմբերին Սան Ֆրանցիսկոյում կայացած Հայաստան – Հնդկաստան հարցերով Գլոբալ Սփյուռքի համաժողովի հաջող փորձը: Համաժողովը համակազմակերպել էին Հնդկաստանի «Դիտորդ հետազոտական հիմնադրամը/ORF» և ԱՊՐԻ Արմենիան:

## Հայ-չինական հարաբերություններ. պահպանելով տնտեսության և քաղաքականության հավասարակշռությունը

Չինաստանը Հայաստանի համար բազմաթիվ ոլորտներում ներմուծման հիմնական ուղղություններից է և իր հերթին, Հայաստանը հիմնականում պղինձ է արտահանում Չինաստան[115]: «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության մեկնարկը 2013թ-ին նպաստել է չինական ներդրումների ներգրավման հարցի քննարկմանը՝ Հայաստանի ենթակառուցվածքային նախագծերում, ինչպիսիք են «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղին և Սյունիքով անցնող Հայաստան-Իրան երկաթուղին[116]: Այնուամենայնիվ, Չինաստանը հիմնականում կենտրոնացած է Հարավային Կովկասով անցնող Միջին միջանցքի վրա՝ այն դիտարկելով որպես Կենտրոնական Ասիայի միջոցով Եվրոպա հասնելու այլընտրանքային ուղի՝ Կասպից ծովի, Հարավային Կովկասի, Սև ծովի և Թուրքիայի տարածքով: Չինական կոնսորցիումը հաղթել է Վրաստանում Անակլիայի նոր խորը նավահանգստի կառուցման մրցույթում[117], և Չինաստանը ստորագրել է Վրաստանի և Ադրբեջանի հետ ռազմավարական գործընկերության մասին փաստաթղթեր՝ համապատասխանաբար 2023 և 2024 թվականներին:

Բացի ներմուծումից և արտահանումից, մինչև վերջերս Չինաստանի քաղաքականությունը Հայաստանում հիմնականում կենտրոնացած է եղել «փափուկ ուժի» խորհրդանշական քայլերի շուրջ, ինչպիսիք են հասարակական տրանսպորտի[118] և շտապ օգնության մեքենաների նվիրաբերումը, ինչպես նաև Երևանում Կոնֆուցիոսի ինստիտուտի և հայ-չինական բարեկամության դպրոցի հիմնումը[119]:

Ներկա դրությամբ Հայաստանի արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացիան չի բերել զգալի փոփոխություններ հայ-չինական հարաբերություններում: Երևանը հիմնականում կենտրոնացած էր ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ հարաբերությունների խորացմամբ, իսկ Արևմուտքի և Չինաստանի միջև աճող առճակատումը չի նպաստում հայ-չինական երկկողմ քաղաքական հարաբերությունների խորացմանը:

Միևնույն ժամանակ, Ադրբեջանը ձգտում է այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքը» ներկայացնել որպես Միջին միջանցքի մաս[120], և նման եղանակով փորձում է համոզել Չինաստանին աջակցել դրա ստեղծմանը:

Այնուամենայնիվ, Չինաստանը գոհ չէ ներկա իրավիճակից, երբ ռազմավարական գործընկերություն է հիմնվել Հարավային Կովկասի երեք հանրապետություններից երկուսի հետ: Սույն զեկույցի շրջանակներում մի քանի հարցազրույցների համաձայն, Պեկինը նույնպես շահագրգռված է Հայաստանի հետ ռազմավարական գործընկերության հաստատմամբ և քննարկում է Հայաստանի և Ադրբեջանի միջև բանակցային գործընթացին աջակցելու տարբերակները՝ Չինաստանի տարածքն առաջարկելով որպես բազմակողմ գագաթնաժողովների ընթացքում հանդիպումների հարթակ: Չինաստանը համոզված է, որ Հարավային Կովկասում ցանկացած նոր պատերազմ բացասաբար կազդի տարածաշրջանի տարանցիկ ներուժի վրա՝ վնաս հասցնելով չինական շահերին: Դա կարող է դառնալ ազդեցության լծակներից մեկը՝ Ադրբեջանի կողմից նոր էսկալացիան կանխելու համար: Քանի որ ԱՄՆ-ի և Չինաստանի միջև մրցակցությունը

նախագահ Թրամփի օրոք խորանալու է, Երևանը պետք է մանրակրկիտ գնահատի ռազմավարական գործընկերություն հաստատելու հնարավոր հետևանքները, միաժամանակ երկարաժամկետ կտրվածքով ուսումնասիրելով, թե որքանով է Չինաստանը համապատասխանում Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթություններին։

## Առաջարկներ

- Հայաստանը պետք է ուժեղացնի Չինաստանին ուղղված այն ուղերձը, որ Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի կողմից ցանկացած նոր էսկալացիա կվտանգի Միջին միջանցքի գործունեությունը՝ դառնալով նոր ուղղակի մարտահրավեր Չինաստանի տնտեսական շահերին։
- Հայաստանը պետք է հերքի պնդումները, թե «Զանգեզուրի միջանցքը» հանդիսանում է Միջին միջանցքի կարևոր մաս՝ տարածելով այն գաղափարը, որ «Խաղաղության խաչմերուկ» նախագծի իրականացումը կնպաստի Միջին միջանցքի զարգացմանը։
- Հայաստանը պետք է գնահատի չինական ընկերությունների հետ համագործակցության հնարավորությունները՝ արևային էլեկտրակայաններ կառուցելու նպատակով։ Ըստ Միջազգային էներգետիկ գործակալության՝ արևային վահանակների արտադրության բոլոր փուլերում Չինաստանի մասնաբաժինը գերազանցում է 80%-ը։

## Հայաստանի և արաբական աշխարհի հարաբերությունները. դիվերսիֆիկացման կարևոր ուղղություն

Անկախություն ձեռք բերելուց ի վեր՝ Հայաստանը հաջողությամբ բարեկամական հարաբերություններ է պահպանում ողջ արաբական աշխարհի հետ, բացառությամբ Սաուդյան Արաբիայի, որը ձեռնպահ է մնացել Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից մինչև 2023թ։ 1990-ական և 2000-ական թվականներին Հայաստանի մերձավորարևելյան արտաքին քաղաքականությունը կենտրոնացած է եղել Լիբանանի, Սիրիայի, Իրաքի և Եգիպտոսի հետ հարաբերությունների ամրապնդման վրա՝ հաշվի առնելով այդ երկրներում լավ դիրքեր ունեցող ստվար հայկական համայնքների առկայությունը։

Հայաստանի արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման համատեքստում ԱՄԷ-ն, Սաուդյան Արաբիան, ինչպես նաև Քուրդիստանի տարածաշրջանային կառավարությունը դարձել են կարևոր գործընկերներ։

Հայաստանն ու ԱՄԷ-ն նույնպես քայլեր են ձեռնարկել տնտեսական համագործակցության խորացման ուղղությամբ։ Ուշագրավ նախաձեռնությունները ներառում են ԱՄԷ-ի Մասդար ընկերության հետ Հայաստանում 200 մեգավատ հզորությամբ արևային էլեկտրակայան կառուցելու համաձայնագիրը[121] և Ֆլայ Առնա ազգային ավիաընկերության ստեղծումը Էյր Արաբիայի և Հայաստանի պետական հետաքրքրությունների հիմնադրամի կողմից։ Չնայած նրան, որ Ֆլայ Առնան հայտարարվել է «ազգային փոխադրող»[122], այն զրկվել է շահագործման լիցենզիայից[123]։ Բացի այդ, արևային էլեկտրակայանի շինարարության նախագիծը դեռ չի մեկնարկել։

Չնայած այս ամենին, վերջին տարիներին ԱՄԷ-ի հետ առևտրի ծավալն աճել է: 2024թ-ի հունվարից մինչև օգոստոս ԱՄԷ-ն փոխարինել է Ռուսաստանին՝ որպես հայկական արտահանման հիմնական ուղղություն, որի ծավալը գերազանցել է 4,3 միլիարդ դոլարը[124]: Այս աճը հիմնականում պայմանավորված էր Ռուսաստանից ներմուծվող ապրանքների, այդ թվում՝ թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի վերամշակմամբ և հետագա վերաարտահանմամբ դեպի ԱՄԷ[125]: ԱՄԷ-ի[126] հետ առանց մուտքի արտոնագրերի սահմանի հատման վերջերս ընդունված կարգն էլ ավելի կիեշտացնի երկկողմ հարաբերությունները:

Հայաստանի արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման վերջին շրջանում ամենանշանավոր ձեռքբերումներից մեկն է 2023թ-ին Սաուդյան Արաբիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը[127], ինչին հաջորդել է Հայաստանի արտաքին գործերի նախարարի 2024թ-ի ապրիլին Էր-Ռիադ կատարած այցը[128]: Հայաստանի հետ Սաուդյան Արաբիայի՝ որպես աճող տարածաշրջանային տերության, ինչպես նաև արաբական և իսլամական աշխարհների առաջատարի, գործընկերությունն ունի զգալի աշխարհաքաղաքական կշիռ: Նրա ազդեցությունը որպես Իսլամական համագործակցության կազմակերպության և բազմակողմ այլ հարթակների անդամ, Սաուդյան Արաբիային դիրքավորում է որպես արժեքավոր դաշնակից՝ Հայաստանի և այլ պետությունների միջև կառուցողական համագործակցության ամրապնդման գործում: Երկկողմ համագործակցությունում լայնածավալ երկարաժամկետ ներդրումներ տրամադրելու Սաուդյան Արաբիայի ունակությունը կարող է ուղղվել ենթակառուցվածքների զարգացմանը և Հայաստանի կայուն աճն ապահովող ավելի լայն տնտեսական նախաձեռնությունների իրականացմանը[129]:

Արաբական աշխարհի հետ հարաբերություններում ևս մեկ կարևոր հանգրվան է դարձել Հայաստանի կառավարության որոշումը՝ ճանաչել Պաղեստինի անկախությունը: Կատարելով այս քայլը՝ Հայաստանը հետևել է եվրոպական մի շարք երկրների օրինակին՝ ակնկալելով ստեղծել բարենպաստ միջավայր Պարսից ծոցի երկրներից ներդրումներ ներգրավելու համար:

Հայաստանը քայլեր է ձեռնարկել ՔՏԿ-ի հետ համագործակցության ընդլայնման ուղղությամբ՝ հաշվի առնելով Մերձավոր Արևելքի շուկաներ մուտք գործելու համար դրա կենսական կարևորությունը[130]:

Հայաստանի արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման գործում արաբական աշխարհի հետ հարաբերությունները պետք է ծառայեն որպես ռազմավարության հիմնաքար: Պարսից ծոցի երկրները, մասնավորապես ԱՄԷ-ն և Սաուդյան Արաբիան, արտաքին քաղաքական հավասարակշռված մոտեցումներ են որդեգրել՝ ամուր կապեր պահպանելով ԱՄՆ-ի, Չինաստանի և Ռուսաստանի հետ: Այս երկրների հետ համագործակցության խորացումն ամրապնդում է Հայաստանի տնտեսությունը և կարող է նպաստել նրա միջազգային հեղինակության բարձրացմանը՝ միաժամանակ չհակադրվելով գլոբալ ուժային կենտրոններին:

## Առաջարկներ

- Հայաստանը պետք է սահմանի և օգտագործի ԱՄԷ-ի, Սաուդյան Արաբիայի և Քաթարի հետ համատեղ ներդրումների նպատակային հնարավորությունները։ Համագործակցության առաջնահերթ ոլորտներն են գյուղատնտեսությունը, արհեստական բանականությունը, էկոլոգիապես մաքուր էներգետիկան և խորը տեխնոլոգիաները։
- Հաշվի առնելով Լիբանանում իրավիճակը և Սիրիայում քաղաքական ցնցումները՝ Հայաստանը կարող է մշակել հատուկ ծրագրեր այդ երկրներում հայերին աջակցելու համար։ Այս քայլերը պետք է իրականացվեն Լիբանանի կառավարության և Սիրիայի նոր կառավարության հետ սերտ համագործակցությամբ, որպեսզի ապահովվեն համագործակցության արդյունավետությունը։
- Հայաստանը պետք է ուսումնասիրի Իրաքի և ՔՏԿ-ի հետ համագործակցության խորացման հնարավորությունները՝ Մերձավոր Արևելքի շուկաներ մուտքի լրացուցիչ կետեր ստեղծելու և դրանով տարածաշրջանային կապերը և տնտեսական փոխգործակցությունը ընդլայնելու համար։
- Հայաստանը կարող է նաև առաջնահերթ ուշադրություն դարձնել արաբական աշխարհի ուժային կենտրոնների հետ մշակութային համագործակցությանը, այդ թվում՝ երաժշտական, գեղարվեստական և կրթական ոլորտներում փոխանակումների խրախուսման միջոցով։

# Ամփոփում

2022-2024թթ-ին Հայաստանի արևմտամետ դիվերսիֆիկացիան տեղի ունեցավ ի պատասխան Հարավային Կովկասում ուժերի հավասարակշռության փոփոխությանը, որը բնութագրվում է Ռուսաստանի ազդեցության անկմամբ, Թուրքիայի կարգավիճակի բարձրացմամբ և Ադրբեջանի ավելի հաստատական կեցվածքով: Հայաստանի կառավարության կարծիքով  զսպման գործիքակազմի ամրապնդման առավել արդյունավետ մոտեցումն էր ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ հարաբերությունների հզորացումը և Հնդկաստանի հետ լայնածավալ պաշտպանական համագործակցության ապահովումը՝ միաժամանակ Լեռնային Ղարաբաղի հայերին տրամադրելով անվտանգության նվազագույն մակարդակ:

Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի զենքի ուժով գրավումը և 2023թ-ի սեպտեմբեր-հոկտեմբերին հայերի բռնի տեղահանումը, Ուկրաինայում պատերազմի դինամիկայի փոփոխությունը, որն ուղեկցվում է Ռուսաստանի դանդաղ, բայց անշեղ ռազմական առաջխաղացմամբ, Վրաստանի և Արևմուտքի հարաբերություններում փոփոխությունները և Հարավային Կովկասում Արևմուտքի ներգրավման նվազող հնարավորությունը կրկին փոխել են տարածաշրջանային դինամիկան՝ Հայաստանին ստիպելով ճշգրտել իր արտաքին և անվտանգային քաղաքականությունը:

Այս փոփոխվող և անորոշ իրավիճակում Հայաստանը պետք է շարունակի դիվերսիֆիկացումը՝ շատ չկենտրոնանալով արևմտյան ուղղության վրա: Սա չի նշանակում, որ Հայաստանը պետք է հրաժարվի արդեն առկա ձեռքբերումներից, ինչպիսիք են ԱՄՆ-ի հետ ռազմավարական գործընկերությունը կամ ԵՄ-ի հետ գործընկերության նոր ծրագիրը: Հայաստանը պետք է ավելի ակտիվ և կոնկրետ փոխգործակցի գլոբալ հարավի տերությունների հետ և ձգտի գտնել Ռուսաստանի հետ փոխգործակցության նոր մոդուս օպերանդի:

Հայաստանի համար «դամոկլյան սուր» է հանդիսանում Ադրբեջանի մաքսիմալիստական մոտեցումը, որը Երևանին մշտապես հիշեցնում է նոր ագրեսիայի հնարավորության, ինչպես նաև տարածաշրջանի կայունության նոր խաթարման մասին: Այս համատեքստում Հայաստանի առաջնային նպատակը պետք է լինի իր ռազմական, քաղաքական և տնտեսական զսպման կարողության ամրապնդումը և տարածաշրջանում ուժերի հավասարակշռության վերականգնումը՝ որպես նոր պատերազմի կանխարգելման միակ կենսունակ գործիք:

## Զսպումը հզորացնելու նպատակով դիվերսիֆիկացիայի խորացում. առաջարկներ

- Ամրապնդել զսպումը երկու տարբեր միջոցներով. Հայաստանի զսպման քաղաքականությունը խթանել երկու եղանակով՝ իրականացնել ռազմական արդիականացում, ամրաշինված սահմանների ստեղծում և առանցքային գործընկերների հետ դիվանագիտական կապերի խորացում: Նման մոտեցումը կբարձրացնի ադրբեջանական ցանկացած հնարավոր ագրեսիայի ռազմական, քաղաքական և տնտեսական գինը Բաքվի համար: Հատկապես արդյունավետ կլինի Հարավային Կովկասում խաղաղության պահպանմամբ և բարգավաճմամբ շահագրգռված կամ դրանց ակտիվորեն աջակցող ուժային կենտրոնների՝ մասնավորապես Ռուսաստանի, Իրանի, ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ փոխգործակցության ընդլայնումը:
- Ներգրավել Թուրքիային. շարունակել Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ ջանքերը՝ ձգտելով այս գործընթացը տարանջատել Հայաստանի և Ադրբեջանի միջև բանակցություններից՝ թուլացնելու Անկարայի և Բաքվի դաշինքը: Այլ դերակատարների, ինչպիսիք են, օրինակ, ԱՄՆ-ը և ԵՄ-ն, աջակցությունը՝ համոզել Թուրքիային հրաժարվել իր նախապայմաններից, ևս կարևոր ներդրում կլինի:
- Ամրապնդել տնտեսական կապերը Հայաստանի հետ բաց սահմաններ ունեցող պետությունների հետ. հայկական բիզնեսի ակտիվ մասնակցությամբ ընդլայնել տնտեսական, էներգետիկ և ենթակառուցվածքային համագործակցությունն Իրանի հետ և ամրապնդել տնտեսական հարաբերությունները Վրաստանի հետ:
- Ռուսաստանի հետ հարաբերությունների վերագործարկում. երկկողմ հարաբերությունների բնույթի փոփոխման պայմաններում Հայաստանը պետք է հստակ ձևակերպի Մոսկվայի հետ նոր հարաբերությունների իր տեսլականը: Միաժամանակ, այն պետք է բաց հաղորդակցվի իր նախկին գլխավոր գործընկերոջ հետ՝ ռազմավարական թափանցիկություն ապահովելու և թյուրընկալման ռիսկը նվազեցնելու համար:
- Ամրապնդել գործընկերային հարաբերությունները ԵՄ-ի և ԱՄՆ-ի հետ. հենվել ԵՄ-Հայաստան գործընկերության նոր օրակարգի և ԱՄՆ-Հայաստան ռազմավարական գործընկերության կանոնադրության ստեղծած դինամիկայի վրա: Վերաձևակերպել Հայաստանի միջազգային դիրքավորումը՝ ընդգծելու տարածաշրջանում կայունացնող և միավորող ուժ դառնալու նրա ձգտումները:
